ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն

Ազգային փորձագետների թիմ՝
Խաչատրյան Սերոբ
Մեջլումյան Ավետիք
Սողոմոնյան Էդիթ

Միջազգային փորձագետ՝
Հերիբերտ Հինցեն

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսական օժանդակությամբ:

Երևան 2020

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային փորձագետների թիմ՝
Խաչատրյան Սերոբ
Մեջլումյան Ավետիք
Սողոմոնյան Էդիթ

Միջազգային փորձագետ՝
Հերիբերտ Հինցեն

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսական օժանդակությամբ:

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 10

ԲԱԺԻՆ 1: ՀՀ-ՈՒՄ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 18

1.1 Մեծահասակների կրթության քաղաքականությունը մինչ 2018թ.-ը 18

1.3. Մեծահասակների կրթության որակավորումների շրջանակներ և ուսումնառության արդյունքների ճանաչում 28

1.4 Մեծահասակների կրթության միջազգային օրակարգ և Հայաստանի Հանրապետություն 35

Բաժին 1. Հիմնական արդյունքների ամփոփում 40

ԲԱԺԻՆ 2: ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 42

2.1 Ընդհանուր ակնարկ: Մեծահասակների կրթության հիմնական դերակատարներ 42

2.2 ՄԿ ծառայություններ ՀՀ հանրային կառավարման մարմինների կամ նրանց՝ կրթական նպատակով ստեղծած կազմակերպությունների կողմից 43

2.3 ՄԿ ծառայություններ բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) և ՔՀԿ-ների կողմից 47

2.4 Աշխատողների և աշխատանք փնտրողների լրացուցիչ կրթություն 53

2.5 ՄՈՒԿ ոլորտին առնչվող տվյալներ և վիճակագրություն 57

Բաժին 2. Հիմնական արդյունքների ամփոփում 60

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 62

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 68

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ 72

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՈՒ	Աշխատանքի վրա հիմնված ուսուցում
ԳԲԾ	Գործողությունների բելեմյան շրջանակ
ԴԻ-ՎԻ-ՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼ	Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՉՈՒ	Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ
ԼՇԿ	Լրացուցիչ և շարունակական կրթություն
ԽՍՀՄ	Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն (մինչև 2019 թ.)
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն (2019 թ.-ից)
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ԿՁՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հարատև կրթություն
ՄԿ	Մեծահասակների կրթություն
ՄԿԳՄԾ	Մեծահասակների կոմպետենցիաների գնահատման միջազգային ծրագիր
ՄԿԿ	Մեծահասակների կրթության կենտրոն(ներ)
ՄԿԿՏՀ	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄԿՈՒԶԱԽ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդ
ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
ՄՈՒԶԵԿ	Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոն
ՄՈՒԿ	Մեծահասակների ուսումնառություն և կրթություն
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՆԿԿՏՀ	Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱԱ	Որակի արտաքին ապահովում
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովան ազգային կենտրոն
ՈՆԱ	Որակի ներքին ապահովում
ՈԱԵՑ (ENQA)	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանց
ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈԵԾ	Որակավորումների եվրոպական շրջանակ
ՈԾ	Որակավորումների շրջանակ
ՈՍԾ/ՈՈԾ	Որակավորումների սեկտորիալ/ոլորտային շրջանակ
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՈՒԱ	Ուսումնառության արդյունքներ
ՈՒԱՀ	Ուսուցման ազգային հիմնադրամ
ՈՒԱՌ	Ուսուցման ազգային ռեեստր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակական կազմակերպություն
CONFINTEA	Մեծահասակների կրթության միջազգային կոնֆերանսներ
RALE	Մեծահասակների ուսումնառության և կրթության վերաբերյալ առաջարկություններ, ՅՈՒՆԵՍԿՕ
GRALE	Մեծահասակների ուսումնառության և կրթության համաշխարհային զեկույց
INQAAHE	Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց
ДОСААФ/ԴՕՍԱԱՖ	Բանակի, ավիացիայի և նավատորմի հետ համագործակցող կամավոր հասարակություն (ռուս.)

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին 20 տարիների ընթացքում Հայաստանում մշակված քաղաքականության փաստաթղթերում մեծահասակների կրթությանն (ՄԿ) առնչվող մի շարք եզրույթներ և հասկացություններ են շրջանառվել: Այդ հասկացություններն են՝ «հարատև կրթություն», «լրացուցիչ կրթություն», «շարունակական կրթություն», «լրացուցիչ և շարունակական կրթություն», «մեծահասակների կրթություն», «ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն»: Կառավարության տարբեր որոշումներում և իրավական փաստաթղթերում շրջանառվող ՄԿ այս հասկացությունների շարքը շփոթմունքի առարկա է ոչ միայն սովորողների, այլև քաղաքականություն մշակողների համար: Եվ քանի որ չկա եզրույթների և հասկացությունների հստակ դասակարգում և վերջնական համաձայնություն այս հարցի շուրջ, դժվար է դառնում հարատև կրթության փաստացի իրականացումը:
2014 թ.-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքում[1] կատարված փոփոխություններին հաջորդեցին որոշ քայլեր՝ այս խառնաշփոթը հաղթահարելու ուղղությամբ, մասնավորապես «մեծահասակների կրթություն» եզրույթին առնչվող կամ իմաստով մոտ եզրույթները սահմանվեցին հետևյալ կերպ.

«Հարատև կրթություն»

«Հարատև[2] կրթություն՝ *անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը»:*

Այս սահմանումը, կարելի է ասել, համարժեքը դարձավ «ցկյանս ուսուցում» և «շարունակական կրթություն» ձևակերպումներին, որոնք առավել հաճախ օգտագործվում էին առօրյա խոսակցականում:

«Լրացուցիչ կրթություն (ուսուցում)»
Նույն օրենքում սահմանված է նաև «լրացուցիչ կրթություն» եզրույթը.

«Լրացուցիչ կրթություն (ուսուցում)՝ *լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս»:*

[1] «Կրթության մասին» ՀՀ օրենք, https://www.irtek.am/views/act.aspx?aid=150066
[2] Հայաստանի իրավական փաստաթղթերում այս հիմնական հասկացությունն իմաստով ավելի մոտ է «permanent (մշտական), everlasting (անընդհատ) » եզրույթներին, և հաշվի չի առնվում նորաստեղծ «ցկյանս» եզրույթի հայեցակարգային ճշգրտությունը, որն ավելի սերտ առնչություն ունի անգլերեն «lifelong» եզրույթի հետ:

Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում են վերապատրաստումների, խմբային կամ անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով: Ուսումնառության արդյունքները գնահատվում և ճանաչվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Լրացուցիչ և շարունակական կրթություն (ԼՇԿ)»

«Կրթության մասին» օրենքի համատեքստում «լրացուցիչ և շարունակական կրթություն» հասկացությունը մնում է անորոշ: Այն չի սահմանվում ոլորտին առնչվող որևէ օրենքում՝ չնայած այն փաստերին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՄՆ) իր կառուցվածքում ունի համանուն բաժին[3] և 2012 թ.-ին ընդունել է «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարություն»: Այս ռազմավարությունը սահմանում է ***Հայաստանում լրացուցիչ և շարունակական կրթության չորս ձևաչափ.***

1) Վերապատրաստումներ, որոնք սահմանված են օրենքներով, հիմնականում ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին և նպատակ ունեն աջակցել ատեստավորմանը մասնակցող աշխատակցին: Դա հիմնականում վերաբերում է հանրային և քաղաքացիական ծառայության համակարգում առկա զբաղմունքներին:
2) Վերապատրաստումներ կամ կարճաժամկետ դասընթացներ, որոնց արդյունքում ձեռք բերված վկայականը հնարավորություն է տալիս ունկնդրին զբաղեցնել որոշակի պաշտոն կամ կատարել աշխատանք: Դա հիմնականում վերաբերում է այն դեպքերին, երբ օրենսդրորեն սահմանված է սերտիֆիկացված լինելու պայմանը:
3) Վերապատրաստման կամ կարճաժամկետ դասընթացներ, որոնք իրականացվում են սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում և հիմնականում ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Դրանք ուղղված են գործազուրկ կամ աշխատանք փնտրող անձանց, անապահով ընտանիքների անդամներին կամ հաշմանդամություն ունեցող անձանց:
4) Վերապատրաստումներ կամ կարճաժամկետ դասընթացներ, որոնք նախաձեռնում են գործատուները՝ իրենց գործունեության կարիքների ու խնդիրների շրջանակում:

[3]Այս հետազոտությունն իրականացման ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում որոշ քննարկումներ էին ընթանում ԼՇԿ բաժնի կարգավիճակի վերաբերյալ: Հետազոտության ամփոփման փուլում ըստ www.escs.am կայքում հասանելի նախարարության կառուցվածքի՝ բաժինը տեղափոխվել է «Երիտասարդության քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչություն» կառուցվածք:

«Մեծահասակների կրթություն (ՄԿ)»

«Մեծահասակների կրթություն» հասկացությունն առաջին անգամ շրջանառվել է 2005 թ.-ին՝ «Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը» փաստաթղթում:

«***Մեծահասակների կրթություն*** *է համարվում հանրակրթության տարիքն անցած անձանց՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ, ինչպես նաև մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվող կրթությունը, որը քաղաքացիների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, տեխնիկական միջոցների, կենսագործունեության միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական ծառայությունների միջոցով ընթացող կրթական գործընթացն է»*[4]:

Այս ձևակերպումն որոշ չափով արտացոլում է **ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մեծահասակների ուսումնառության և կրթության վերաբերյալ առաջարկություններ» (RALE-Recommendation on Adult Learning and Education)** փաստաթղթում ներառված, միջազգայնորեն ընդունված սահմանումը, այն է՝

«Մեծահասակների կրթությունը ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գործընթացների ամբողջությունն է, որի միջոցով այն անձը, ում իրեն շրջապատող հասարակությունը համարում է մեծահասակ, զարգացնում և հարստացնում է ապրելու և աշխատելու իր կարողությունները՝ ելնելով թե՛ սեփական և թե՛ իր համայնքի, կազմակերպության և հասարակության շահերից»:[5]

Ուստի սահմանումը ներառում է չափահաս տարիքի անձանց ուսումնառությանը, կրթությանը և վերապատրաստմանը վերաբերող բոլոր գործողությունները. վերջիններս ընդհանուր կրթական համակարգի ենթաբաղադրիչներ են և հարատև կրթության բաղկացուցիչ մաս են կազմում, ինչը ՀՀ իրավական փաստաթղթերում «լրացուցիչ և շարունակական կրթություն» հասկացությամբ է սահմանված: Այդուհանդերձ, այս երկու սահմանումները (ՄԿ և ԼՇԿ) ՀՀ համապատասխան օրենքներում կամ ենթաօրենսդրական ակտերում ներառված չեն:

Եզրույթների՝ այս մշտապես փոփոխվող կիրառությունը և համապատասխան իրավական փաստաթղթերում խաչաձև հղումների բացակայությունը Հայաստանում ՄԿ ոլորտը դարձնում են ինչ-որ չափով անըմբռնելի և դժվար կառավարելի: Այդուհանդերձ, սույն հետազոտությունը փորձում է վերլուծել Հայաստանում ՄԿ կարգավիճակը և նպատակային առաջարկություններ ներկայացնել՝ հաշվի առնելով

[4] «Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը», https://www.irtek.am/views/act.aspx?aid=34606

[5] ՅՈՒՆԵՍԿՕ «Մեծահասակների ուսումնառության և կրթության վերաբերյալ առաջարկություններ» (RALE-Recommendation on Adult Learning and Education), https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000245179/PDF/245179eng.pdf.multi

ինչպես ազգային օրենսդրության համատեքստում կիրառվող հասկացությունները, այնպես էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգայնորեն ճանաչված սահմանումները: «Լրացուցիչ և շարունակական կրթությանը» (ԼՇԿ) առնչվող փաստաթղթերում այն վերաբերում է տարիքային բոլոր խմբերին, այդ թվում՝ մեծահասակներին: Արդյունքում այս հետազոտությունը բախվում է սահմանափակումների՝ պայմանավորված այն հանգամանքով, որ չկան ուղեցույցներ այն մասին, թե ինչպես է պետությունը նախատեսում և պլանավորում լրացուցիչ և շարունակական կրթության իրականացումը հատուկ մեծահասակների համար: Սա մեկնաբանությունների տեղիք է տալիս, այդ պատճառով հետազոտական թիմն ընտրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ (մասնավորապես՝ ԼՇԿ ոլորտի) շրջանառվող և միջազգայնորեն ընդունված հասկացությունների (օրինակ՝ «մեծահասակների ուսումնառություն և կրթություն» (ՄՈՒԿ) համատեքստում կիրառելի համալիր մոտեցում: Այնուամենայնիվ, Հայաստանի իրավիճակի մասին խոսելիս ԼՇԿ եզրույթն ավելի հաճախ է կիրառվում, իսկ ՄՈՒԿ եզրույթը՝ միայն միջազգային համատեքստում և մասնավորապես այն դեպքերում, երբ հայաստանյան փաստաթղթերում ՄԿ-ը կամ ՄՈՒԿ-ը ներառված են որպես եզրույթներ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մեծահասակների կրթության (ՄԿ) ոլորտի ձևավորումը և դրա պրակտիկան Հայաստանում սկիզբ են առել դեռևս խորհրդային տարիներին, երբ ՄԿ հիմնական թիրախը բնակչության հայրենասիրական դաստիարակությունն ու կոմունիստական գաղափարախոսության նպատակաուղղված տարածումն (ինդոկտրինացիա) էր: ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անկախացումից հետո առաջին օրենսդրական փաստաթուղթը, որ ներառում էր մեծահասակների կրթությանն առնչվող որոշ դրույթներ, 1999 թ.-ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքն էր: Վերջին 20 տարիների ընթացքում ՄԿ վերաբերյալ բազմաթիվ հասկացություններ և եզրույթներ են առաջ բերվել և շրջանառվել ոլորտին առնչվող փաստաթղթերում՝ տեղիք տալով տարատեսակ սխալ մեկնաբանությունների: Անճշտությունները մասամբ շտկվեցին 2014 թ.-ին, երբ նոր՝ «լրացուցիչ և շարունակական կրթություն» (ԼՇԿ) եզրույթը և դրա նպատակները ներկայացվեցին որպես «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների մաս:

ՄԿ ազգային օրակարգի հետագա մշակման հարցում բեկումնային կարելի է համարել 2012 թ. -ին Կրթության և գիտության նախարարությունում (ԿԳՆ) Լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ստեղծումը: Վարչությունն իրավասու էր առաջարկել և նախագծել ԼՇԿ թիրախային նոր ռազմավարություններ և հայեցակարգեր: «ՀՀ-ում ցկյանս ուսումնառության հայեցակարգի» (2009 թ.) և 2013-2017 թթ. «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության և գործողությունների պլանի» ընդունման շնորհիվ գրանցվել են որոշ կարևոր արդյունքներ: Ուշագրավ է, որ առաջին անգամ վերոնշյալ հայեցակարգում «կրթություն» բառի փոխարեն կիրառվեց «ուսումնառություն» բառը, որն ընդգծեց ուսումնառող անձի կենտրոնական դերը: Այնուամենայնիվ, ի հայտ եկավ նոր մարտահրավեր, քանզի ո՛չ «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրում», ո՛չ նրան հաջորդող 2016-2025 թթ. ծրագրում (երկարաձգված մինչև 2030 թ.) նշված չէին ԼՇԿ կամ ՄԿ եզրույթները: 2017 թ.-ից հետո չվերահաստատվեց նաև «Լրացուցիչ և շարունակական կրթության 2013-2017 թվականների ռազմավարությունը և գործողությունների պլանը»: Նշվածը ցույց է տալիս, որ ՀՀ ռազմավարական ծրագրերում և օրենքների մեծ մասում առկա են բացթողումներ ոլորտին առնչվող հասկացություններին հղումներ կատարելու հարցում, ինչպես նաև հետևողականության պակաս՝ այդ բացթողումները լրացնելու գործում:

2018 թ. թավշյա հեղափոխությունից հետո հանրության՝ արդյունավետ գործող կրթական համակարգ ունենալու մեծ սպասելիքների լույսի ներքո ՀՀ նոր կառավարությունը վերանայեց և ընդունեց մի շարք ծրագրեր՝ ուղղված ՀՀ քաղաքացիների աշխատունակության բարձրացմանը: Առնվազն երկու նմանատիպ նախաձեռնություն՝ «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարական ծրագիրը և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը», ուղղված են մեծահասակների

կարողությունների զարգացմանը, թեև դրանցում չեն նշվում գլխավոր՝ ԼԾԿ կամ ՄԿ եզրույթները: Կրթության նոր ռազմավարությունը, որն այժմ մշակում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՄՆ), նախատեսում է ներառել առանձին ենթաբաժին՝ ԼԾԿ-ի մասին կարգավորումներով:

2011 թ.-ից Հայաստանում գործում է կրթության որակի ապահովման (ՈԱ) համակարգ՝ ներքին (ՈՆԱ) և արտաքին ՈԱ (ՈԱԱ) ընթացակարգերով և հավատարմագրման պրակտիկայով: Մակրո մակարդակում Հայաստանում ՈԱ-ը կարգավորվում է «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը» և «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումներով: Մեզո մակարդակում ՈԱ-ն իրականացվում է «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների» համաձայն, որոնց հիման վրա կատարվում են Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումները: Այնուամենայնիվ, համակարգում բացակայում են ԼԾԿ/ՄԿ որակի ապահովման ազգային չափանիշներ, մեխանիզմներ և ընթացակարգեր: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) ՀՀ-ում որակի ապահովման միակ լիազոր մարմինն է, որը, սակայն, չի իրականացնում կրթության այլ ձևերի ՈԱ և հավատարմագրում՝ բացառությամբ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) և բարձրագույն կրթության մակարդակներում ֆորմալ մասնագիտական որակավորման:

2011 թ.-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը» (ՈԱՇ): Ի տարբերություն «Որակավորումների եվրոպական շրջանակի» (ՈԵՇ), որը մշակված է ընդհանուր աշխատաշուկայի համար ուսումնառության արդյունքների (ՈՒԱ) ճանաչման միջոցով ՄՈՒԿ-ը խթանելու համար, ՈԱՇ-ը՝ որպես մետաշրջանակ, ֆորմալ որակավորումից դուրս վավերացման և ճանաչման շրջանակների հարթ ինտեգրման կարիք ունի, ուստի չի նույնացվում ԼԾԿ/ՄԿ ծրագրերի և ոչ ֆորմալ ՄՈՒԿ որակավորումների հավատարմագրման հետ: Մյուս կողմից՝ «Որակավորումների ազգային ոլորտային շրջանակը», որը ՀՀ-ում դեռ պիլոտային փուլում է, աշխատուժի շարժունակության խթանման և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող նախնական հմտությունների գնահատման հնարավորություն է տալիս: Ազգային ՈԱ չափանիշների և մեխանիզմների բացակայության պատճառով ՄՈՒԿ և ՀՈՒ ոլորտում ծառայություններ տրամադրողների առաջարկած ծրագրերի մեծամասնությունը կիրառում է ներքին ՈՆԱ ընթացակարգեր, ինչպիսիք են նախաթեստերն ու հետթեստերը (pre/post tests), ամփոփիչ հարցումները և մասնակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումները:

Հայաստանում ԼԾԿ/ՄՈՒԿ քաղաքականություն մշակելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ կառավարության միջազգային պարտավորությունները: Հայաստանը, 1992 թ.-ից ի վեր լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկիր, 2009 թ.-ին մասնակցեց Մեծահասակների կրթության միջազգային վերջին համաժողովներին (CONFINTEA VI), որտեղ ընդունվեց

«Գործողությունների բելեմյան շրջանակը (ԳԲՇ)»: Հայաստանի ազգային զեկույցները ՅՈՒՆԵՍԿՕ-ին են տրամադրվել 2008, 2012 և 2015 թվականներին, որոնց հիման վրա ՅՈՒՆԵՍԿՕ-ն հրապարակել է «Մեծահասակների կրթության և ուսումնառության գլոբալ զեկույց»-ը (GRALE): Այս զեկույցներում առկա են տեղեկատվական բացեր գլխավորապես ՄԿ/ՄՈՒԿ ծրագրերին մեծահասակների մասնակցության, դրանց կառավարման համակարգերի և որակի ապահովման վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը նաև պարտավորություններ ունի ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ)՝ մասնավորապես՝ 4-րդ նպատակի շրջանակներում, որը նախատեսված է «կրթություն բոլորի համար» ծրագրի առաջընթացը խթանելու և կյանքի որակը փոխող կայուն արդյունքների հասնելու համար: Հայաստանի ԿԶՆ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը ազգային մակարդակում մշտադիտարկվում, իսկ ցուցանիշները՝ հավաքագրվում են ՀՀ վիճակագրականն կոմիտեի (ՎԿ) կողմից: Ցավոք ԿԶՆ-ները, որոնք վերաբերում են ՄԿ/ՀՈՒ ցուցանիշներին, չեն մուտքագրվում ազգային տվյալների բազա և չեն հանրայնացվում:

Կառավարությանն առընթեր մարմինները, որոնք պատասխանատու են ՄՈՒԿ ինստիտուցիոնալացման և մասնագիտացման համար, նույնպես բախվում են մարտահրավերների: Օրինակներից մեկը 2011 թ.-ին Կառավարության ստեղծած Ուսուցման ազգային հիմնադրամն է (ՈՒԱՀ), որը սոցիալական գործընկերների անունից լիազորված է համակարգել և կազմակերպել ԼԸԿ/ՄԿ իրականացումը, մշակել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգեր, ինչպես նաև իրականացնել կարճ ծրագրերի մշտադիտարկում՝ ճանաչման և հավատարմագրման համար: Մշակված քաղաքականության մեջ ոչ լիարժեք լուծումներն ու կոշտ իրավական մեխանիզմները, պետական ֆինանսավորման և սուբսիդավորման ծրագրերի բացակայությունը, սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսներն այն գործոններն են, որոնք խոչընդոտում են ՈՒԱՀ-ի՝ իր պարտականություններն ու պարտավորությունները լիարժեք կատարելուն:
Հանրային սեկտորում ոլորտի չորս հիմնական շահագրգիռ կողմերից Հայաստանում ՄՈՒԿ ծրագրերի ամենաակտիվ ֆինանսավորողը (ինչպես նաև ծրագրային ամենամեծ բազմազանությունն ապահովողը) պետությունն է:
Մյուս դերակատարներն են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), համալսարանները և զբաղվածության գործակալությունները (ներառյալ գործատուները): Պետական աշխատողների և քաղաքացիական ծառայողների համար ԼԸԿ/ՄՈՒԿ ծրագրերի մեծ մասը պարտադիր է: Նրանց վերապատրաստման ծախսերը հոգում են պետական բյուջեից կրթության ոլորտի հատկացումների միջոցով՝ «Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն» խորագրի ներքո: Վերջինիս մեծ մասը կապված է «արտադպրոցական դաստիարակության» հետ, որտեղ առաջնայնություն է տրվում ոչ թե մեծահասակներին, այլ երեխաներին և դեռահասներին: Չնայած ֆինանսավորմանը՝ պետությունը չունի իր վերապատրաստման անհրաժեշտությունը գնահատող

(ինքնագնահատման) ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ուստի այդ դասընթացները հիմնականում ֆորմալ բնույթ են կրում և զուրկ են նորարարական բովանդակությունից:

Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ՔՀԿ-ները (հիմնականում ՀԿ-ները) առաջարկում են ՄՈՒԿ դասընթացներ՝ ուսուցման ճկուն մեթոդաբանությամբ և բովանդակությամբ, բայց դրանց առարկայական ոլորտները՝ ուղղված հիմնականում ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը և քաղաքացիական ակտիվիզմին, հաճախ նեղ են և թույլ չեն տալիս ավելի լայն խմբերի թիրախավորել: Գոյություն ունի մեծահասակների կրթության համայնքային երկու կենտրոն, որոնց աջակցում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, և որոնք գործունեություն են ծավալում հենց ՄՈՒԿ ոլորտում:

Համալսարաններն անկախ են ու ազատ՝ հատուկ մասնագիտացված բաժինների ու կենտրոնների միջոցով շարունակական կրթություն և ՀՈՒ տրամադրելու հարցում, որով հիմնականում թիրախավորում են իրենց գիտական անձնակազմի և շրջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացումը: Իր մոտեցմամբ տարբերվում է Հայաստանի ամերիկյան համալսարանը, որն իր բաց կրթության հարթակի միջոցով առաջարկում է դասընթացներ, որոնց արդյունքում մասնակիցներին տրվում է հավաստագիր: Հայաստանում չկա համալսարանական ՀՈՒ կազմակերպման միասնական մոդել:

Աշխատողների մասնագիտական զարգացման համակարգը նույնպես լիովին կայացած չէ Հայաստանում: Քանի որ գործատուները չեն վստահում համալսարանական որակավորումների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությանը, նրանցից ոմանք (օրինակ՝ SS ոլորտը) արդեն ներդրումներ են կատարում իրենց աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացման համար: Այնուամենայնիվ, շատերն այս ներդրումները երկրորդական են համարում՝ այդպիսով ընդհանուր առմամբ սահմանափակելով մեծահասակների՝ ՄՈՒԿ և ՀՈՒ ծրագրերին մասնակցելու, ինչպես նաև նրանց համար այդ ծրագրերի հասանելիության հնարավորությունը:
Զբաղվածության պետական գործակալությունը աշխատանք փնտրողների և տնտեսապես պասիվ բնակչության համար իրականացնում է պետության կողմից սուբսիդավորվող կարճաժամկետ ծրագրեր, որոնց նկատմամբ հետաքրքրվածությունը ցածր է՝ գործազրկության նպաստի կրճատման, դիմելու բարդ և բյուրոկրատական ընթացակարգերի և հասարակության իրազեկվածության ցածր մակարդակի պատճառով:

Հայաստանում ՄՈՒԿ վերաբերյալ վիճակագրական և որակական ամբողջական տվյալների հավաքագրման ինստիտուցիոնալ մեխանիզմներ չկան: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ/emis.am), որը կառավարվում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից, բաղկացած է նախադպրոցական, դպրոցական, մասնագիտական և բարձրագույն կրթության

կրթական ենթակառուցվածքների էլեկտրոնային կառավարման 3 ենթահամակարգերից: Համակարգը բացառում է լրացուցիչ և շարունակական կրթության (ԼԾԿ) և մեծահասակների կրթության (ՄԿ) վերաբերյալ տվյալների հավաքագրումը և մշակումը: «Աշխատուժի հետազոտության» շրջանակում Վիճակագրական կոմիտեն հրապարակում է նաև անվանազերծված միկրոտվյալների բազա՝ տնային տնտեսության անդամների հարցումների հիման վրա:

Ոլորտի ուսումնասիրության արդյունքում կարելի է ենթադրել, որ մեծահասակների ուսումնառության և կրթության անհրաժեշտությունը ցածր է գնահատվում հայ հասարակության, այդ թվում՝ նաև մասնագետների կողմից: Լրացուցիչ և շարունակական կրթության (ԼԾԿ) և մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) ծրագրեր մատուցողները (այս թվում՝ Կառավարությունը) սահմանափակվում են միայն մասնագիտական կարիքների բավարարմամբ: Պետական բյուջեից ԼԾԿ գրեթե ողջ ֆինանսավորումն ուղղվում է հանրային ծառայողների վերապատրաստմանը: Չնայած միջազգային հանրության առաջարկներին՝ ՄՈՒԿ պաշտպանությանը նվիրված ջանքերին և դրանում կատարված ներդրումներին՝ ուղղված ողջ կյանքի ընթացքում սովորելու հնարավորության և արժեքի գաղափարի խթանմանը, քաղաքականություն մշակողները դեռևս արդյունավետորեն չեն աջակցում մեծահասակների ուսումնառությանն ու կրթությանը:
Հաշվի առնելով վերոնշյալները՝ հետազոտական թիմը մշակել է ԳԲԾ ուղեցույցներին համաքայլ մի շարք առաջարկներ՝ քաղաքականության բարելավման և ԼԾԿ/ՄԿ արդյունավետ կառավարման շուրջ: Ստորև ներկայացված է հիմնական առաջարկների ամփոփագիրը (բոլոր առաջարկները ներառված են սույն փաստաթղթի համապատասխան բաժնում).

- ՀՀ-ում կրթության մասին հիմնական օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը գլխավորապես ներառում են ՄՈՒԿ ոլորտի հակասական տերմինաբանություն: Ուստի ցանկալի է, որ օրենսդիրները խաչաձև հղումներ կատարեն այն համընդհանուր (միջազգայնորեն) համաձայնեցված եզրույթներին և նրանց սահմանումներին, որոնք վերաբերում են ՄՈՒԿ ոլորտին, ինչպես նաև կիրառեն հենց այդ եզրույթները (ԼԾԿ, ՄԿ և ՀՈՒ) ՄՈՒԿ բոլոր իրավական փաստաթղթերում, ներառյալ՝ կրթության ռազմավարություններում:
- Ներկայումս նախարարության կողմից մշակվող Կրթության ռազմավարության մեջ պետք է ամրապնդվի ՄՈՒԿ-ը՝ որպես կրթական համակարգի ենթաճյուղ: Այնուհետև, այս ռազմավարության իրագործումն ուժի մեջ դնելու համար խորհուրդ է տրվում մշակել ՄՈՒԿ ճանապարհային քարտեզ: Մեծահասակների ուսումնառությանն ու կրթությանը նվիրված առանձին ծրագիր պետք է նախատեսվի ինչպես պետբյուջեի, այնպես էլ միջնաժամկետ ծախսերի ծրագրերում:
- Ակտիվ քաղաքացիական հմտությունների ձևավորումը պետք է դառնա ռազմավարական առաջնահերթություն:

- Անհրաժեշտ է Ուսուցման ազգային հիմնադրամին ապահովել պատշաճ պետական ֆինանսավորմամբ, որպեսզի վերջինս ամբողջությամբ իրականացնի իր մշտադիտարկման, ճանաչման, վավերացման և հավատարմագրման գործառույթները՝ նախատեսված համապատասխան իրավական որոշումներով և ընթացակարգերով:
- Կարելի է օգտվել Ազգային որակավորումների ոլորտային շրջանակից (որը դեռ փորձնական փուլում է Հայաստանում)՝ գործատուների կողմից ուսումնառության ճանաչմանը հասնելու համար, քանի որ այս շրջանակը աշխատուժի շարժունակության խթանման և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող նախնական հմտությունների գնահատման հնարավորություն է տալիս: Աշխատողների մասնագիտական կարիքները գնահատելու համար պետությունը ինստիտուցիոնալ տեսանկյունից վստահելի համակարգեր պետք է ներկայացնի: Պետական մարմինների կողմից վերապատրաստման պահանջները պետք է հիմնված լինեն այնպիսի կարիքների գնահատման վրա, որոնք կհանգեցնեն վերապատրաստումից ակնկալվող պարզ և չափելի արդյունքների:
- Անհրաժեշտ է ներդնել և կիրառել իրավական գործիքներ՝ աշխատողներին մասնագիտական (ներառյալ՝ լրացուցիչ) կրթության իրավունք և հասանելիություն ապահովելու, ինչպես նաև գործատուի ստեղծած խոչընդոտներից պաշտպանելու համար: Կառավարության աշխատակիցների համար ՄՈՒԿ ծրագրերը պետք է ավարտվեն այնպիսի գնահատմամբ, որ թե՛ աշխատակիցները, թե՛ հանրային գործատուները հստակ պատկերացում կազմեն իրենց աշխատանքային հմտությունների բնույթի և որակի վերաբերյալ:
- Անհրաժեշտ է ուսումնասիրել ՄՈՒԿ լավագույն փորձը և հնարավորության դեպքում կրկնօրինակել այն, որպեսզի ՄՈՒԿ համապատասխան ծառայությունները հասանելի լինեն մեծահասակների տարբեր խմբերին (ներառյալ՝ խոցելի խմբերին): Բացի այդ՝ անհրաժեշտ է մշակել ինստիտուցիոնալ, վստահելի մեխանիզմներ՝ Հայաստանում ՄՈՒԿ վերաբերյալ վիճակագրական և որակական տվյալներ հավաքագրելու համար, որոնք կկիրառվեն նաև GRALE-ում և ԿԶՆ-ներում:
- Անդրագոգիկան՝ որպես մասնագիտացում, պետք է հասանելի դառնա նաև կրթության (ՈԱԾ) համակարգի այլ մակարդակներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շարունակական կրթությունը կամ ցկյանս ուսումնառությունը ժամանակակից կյանքի ամենակարևոր որակներից մեկն է, քանի որ Հայաստանում և ողջ աշխարհում ընթացող փոփոխությունների տեմպը պահանջում է հմտությունների զարգացման և վերապատրաստումների շարունակականություն: Սովորելու առաջնայնությունը պայմանավորված է մի շարք սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային գործոններով: Օրինակ՝ Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում, տնտեսության մի ոլորտում աշխատատեղերի կրճատումը հանգեցնում է մեկ այլ ոլորտում նոր աշխատատեղերի կամ ամբողջական սեկտորի ստեղծման: Տեխնոլոգիական զարգացումը ևս մեծ ազդեցություն ունի աշխատաշուկայի վրա և կարող է վերաձևավորել այն: 2020թ.-ին աշխարհը տուժեց տնտեսական աճի դանդաղումից՝ COVID-19 համաճարակով պայմանավորված, որը մեկ անգամ ևս ցույց տվեց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հմտությունների կարևորությունը կայուն տնտեսության և թվային ուսուցման աղբյուրների հասանելիության հարցում:

Եթե նախկինում գիտելիքի ծավալը դանդաղ էր աճում, ապա այսօր այդ աճը անհամեմատ մեծ է: Ընդլայնվել է նաև գիտելիքների ու հմտությունների պահանջարկը: Կրթությունն այլևս չի դիտարկվում սոսկ որպես գիտելիքի փոխանցում ուսուցչից աշակերտին: Մասնագիտական և տեխնոլոգիական գիտելիքներից զատ անհրաժեշտ է տիրապետել այնպիսի «փափուկ հմտությունների», ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, կոնֆլիկտների, խնդիրների լուծումը, ճկունությունը և մի շարք այլ հմտություններ: Արդյունքում, ներկա իրողությունները մեծահասակներից պահանջում են այնպիսի հմտությունների տիրապետում, որոնք կարևոր նշանակություն ունեն ինչպես նոր զարգացող ճյուղերի աշխատանքային մարտահրավերներին դիմակայելու, այնպես էլ մասնագիտական և անհատական զարգացմանը խթանելու համար: Հայաստանում ընդունված «Աշակերտ, ուսանող ժամանակ ես արդեն սովորել եմ» կարծրատիպն այլևս ժամանակավրեպ է:

ՄԿ-ը չի կարող կենտրոնանալ մասնագիտական որակների զարգացման վրա՝ բացառապես տնտեսական օգուտ ունենալու նկատառումներով: Հայաստանյան հասարակության զարգացումը կախված է նաև իր ակտիվ, պատասխանատու քաղաքացիներից, որոնք ունեն արժեքային կողմնորոշիչներ և բարձր իրավագիտակցություն: Այս տեսանկյունից Հայաստանում նկատվում է մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը, իրավահավասարությանը և գենդերային հարցերին վերաբերող կրթական ծրագրերի թվաքանակի աճ: Վերջին տասնամյակի ընթացքում ՄԿ-ը մեծ ուշադրություն է գրավել, ինչը դրական ազդեցություն է ունեցել ժողովրդավարական պրակտիկայի առաջխաղացման վրա, օրինակ՝ ֆասիլիտատիվ համագործակցության, կառավարության հաշվետվողականություն, հաստատությունների ինստիտուցիոնալ զարգացումը և այլն: Ընդհանուր առմամբ հայ հասարակությունը միշտ կարևորել է երեխաների կրթությունը: Սակայն երեխաների սովորելու ձգտումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ինչ ինտենսիվությամբ են սովորում մեծահասակները: Հարատև կրթության առավելությունները որպես

մեծահասակների ապրելակերպի բաղկացուցիչ մաս ընդունելը ֆունկիցոնալ և որակյալ կրթական համակարգի նախապայմանն է: Ավելին, մեծահասակների շարունակական կրթությունը նպաստում է նաև միջսերնդային արդյունավետ հաղորդակցությանը և հասարակության համերաշխությանը: Բազմաթիվ հետազոտություններով[6] ապացուցված է, որ հարատև կրթությունը բարձրացնում է մարդու կյանքի որակը, նպաստում բարեկեցությանը և երկարակեցությանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորող մարդիկ պաշտպանված են բազմաթիվ հիվանդություններից՝ հատկապես նրանցից, որոնք ուղեղի հետ են կապված[7]: Պարբերաբար հայտնվելով սովորողի դերում՝ անհատը հնարավորություն է ստանում վերանայելու իր պատկերացումները, հաղթահարելու կարծրատիպային մտածողությունը: Ինչպես ասում էր հայտնի սոցիոլոգ Ալվին Թոֆլերը՝ «Կրթությանը կարելի է նոր հարթության մեջ դնել՝ ուսանողին սովորեցնելով ինչպես սովորել, վերասովորել կամ հրաժարվել նախկինում սովորած որոշ բաներից… Վաղը գրագիտություն չունեցողը կհամարվի ոչ թե նա, ով չի կարողանում կարդալ, այլ նա, ով չի սովորել՝ ինչպես սովորել[8]»:
Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը ոչ միշտ է մեծահասակներին հնարավորություն ընձեռում ժամանակ հատկացնելու իրենց հետագա կրթությանն ու ուսումնառությանը: Եթե միջազգային գործելակերպ ունեցող գործատուներն ապահովում են իրենց աշխատակիցների համապատասխան վերապատրաստումները, ապա բազմաթիվ գործատուներ մեծահասակների շարունակական կրթությունն ու վերապատրաստումը սովորաբար համարում են երկրորդական: Համատեղությամբ ու արտաժամյա աշխատանքը այն երկու հիմնական տնտեսական գործոններն են, որոնց պատճառով մեծահասակները շատ քիչ ժամանակ են հատկացնում իրենց ուսումնառությանն ու կրթությանը՝ վատ օրինակ ծառայելով երիտասարդ սերունդներին: Միևնույն ժամանակ, քաղաքացիական ծառայողների և հանրային ոլորտի այլ աշխատողների որակավորման և վերապատրաստման պահանջը կարգավորվում է օրենքով, ըստ այդմ՝ ՄԿ-ը հրամայական է դառնում նշյալ խմբերի համար: Այնուամենայնիվ, ՄԿ-ը օրենսդրական պահանջ չէ Հայաստանի բոլոր քաղաքացիների համար: Ինչպես երեխաների կրթության պարագայում, մեծահասակների շարունակական ու հարատև կրթությունը նույնպես բախվում է սոցիալական արդարության և մատչելիության խնդիրների: Այսպիսով, ՄՈՒԿ կարիքներին, քաղաքականությանը և պրակտիկային վերաբերող խնդիրների արդյունավետ լուծումը համալիր մոտեցում է պահանջում:

Սույն հետազոտությունը անդրադառնում է Հայաստանում մեծահասակների կրթության քաղաքականության և օրենսդրական կարգավորման, կառավարման և ֆինանսավորման, իրականացման իրավիճակին՝ վերլուծելով այն և տալով առաջարկություններ ոլորտի ապագա զարգացման տեսանկյունից:

[6] Escuder-Mollon P. et al. (2014), Diaz-Lopez P. et al. (2016)
[7] Vemuri P. et al (2014); Gidicsin C.M., Maye J.M, Locascio J.J et al. (2015)
[8] Toffler, A., (1970), p. 271

ԲԱԺԻՆ 1: ՀՀ-ՈՒՄ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Մեծահասակների կրթության քաղաքականությունը մինչ 2018թ.-ը

Հայաստանում մեծահասակների կրթությամբ զբաղվող կառույցներ գործում են 20-րդ դարի կեսերից՝ Խորհրդային միության ժամանակաշրջանից: 1947թ.-ին ստեղծվեց «Գիտելիք[9]» ընկերությունը, որը զբաղվում էր քաղաքական և գիտական գիտելիքների տարածմամբ: Չնայած ընկերությունը գլխավորապես քարոզչական գործունեություն էր ծավալում, այն նաև կազմակերպում էր քաղաքացիների մասնագիտական և ժամանցային կարիքներին ուղղված մի շարք հանրային դասախոսություններ: Մեկ այլ հայտնի կառույց է ԴՕՍԱԱՖ-ը (ռուսերեն թարգմանությամբ՝ Բանակին, ավիացիային և նավատորմին աջակցող կամավորական ընկերություն), որը ստեղծվել է 1951թ.-ին և որի հիմնական նպատակը բնակչության հայրենասիրական դաստիարակությունն ու հայրենիքի պաշտպանությանը պատրաստելն էր: Կառույցը շատ լուրջ դեր ունեցավ երկրում կրտսեր տեխնիկական աշխատողների պատրաստման գործում:
1958թ.-ին հիմնադրվեց Գյուտարարների և ռացիոնալիզատորների համամիութենական միությունը, որը մասնագիտական աջակցություն էր ցուցաբերում գործարանների աշխատակիցներին՝ հետևելով տեխնիկական նորամուծություններին:
Մեծահասակների կրթության ոլորտում որակավորման բարձրացման, ստաժավորման համակարգերը ներդրվեցին ավելի ուշ, երբ բուհերում սկսեցին գործել հասարակական գիտությունների մասնագիտացված ֆակուլտետներ, որոնք սովորողներին երկրորդ որակավորում ձեռք բերելու հնարավորություն էին ընձեռում: Վերջապես 1989 թ.-ին Խորհրդային միությունում առաջին անգամ ընդունվեց «Շարունակական կրթության կոնցեպցիան», մշակվեցին համապատասխան իրավական ակտեր, սակայն ԽՍՀՄ փլուզման պատճառով նշված կոնցեպցիան չիրականացվեց:
Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին ֆորմալ կրթության համար գործում էր տարիքային սահմանափակում. 35 տարեկանից բարձր անձինք ֆորմալ կրթական համակարգ չէին ընդունվում: Վերոգրյալից կարելի է նաև եզրակացնել, որ կրթության ընդգծված գաղափարախոսական, քարոզչական ուղղվածությունը Սովետական Հայաստանում ՄԿ քաղաքականության մշակման մեկ այլ սահմանափակման պատճառն էր հանդիսանում:
Անկախ Հայաստանում մեծահասակների կրթության հետ կապված առաջին օրենսդրական դրույթն ամրագրվեց 1999 թ. -ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որի Հոդված 26-ը ներառում էր լրացուցիչ կրթության մասին դրույթներ: Այն պարունակում էր «լրացուցիչ կրթության» կարևորության և դրա իրականացման վերաբերյալ որոշ ընդհանուր հայտարարություններ: Ըստ այդմ՝ լրացուցիչ կրթության նպատակ էր սահմանվում քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարումը: Օրենքում էական փոփոխություններ իրականացվեցին 2014 թ.-ին. ներմուծվեցին «հարատև կրթություն», «ֆորմալ, ոչ

[9] Corley, F., (1996), "The Armenian Church Under the Soviet Regime, Part 1: The Leadership of Kevork", Religion, State & Society, Vol. 24, No. 1, pp 9-47

ֆորմալ և ինֆորմալ կրթություն», «ունկնդիր», «ուսումնական կենտրոն» և «սոցիալական գործընկեր» հասկացությունները: Լրացուցիչ կրթության նպատակը վերաձևակերպվեց հետևյալ բովանդակությամբ. «Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով»[10]: Լրամշակվեց նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի Հոդված 26-ը: Մասնավորապես՝ ավելացվեց լրացուցիչ կրթության ուսումնառության արդյունքները օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատելու և ճանաչելու մասին մաս: Կրթության ոլորտում կառավարության գործառութային իրավասությունների ցանկում ավելացվեցին լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգերի սահմանումները:
Օրենսդրական դաշտում առաջանցիկ կարելի է համարել էկոլոգիայի ոլորտը: 2001 թ.-ին ընդունված «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության մասին» ՀՀ օրենքը[11] հետխորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին փաստաթուղթն էր, որում առանձին բաժնով խոսվում է «ազգաբնակչության անընդմեջ կրթության մասին»: Այս օրենքը սահմանում է շրջակա միջավայրի և առողջության վրա վնասակար ազդեցություն ունեցող գործունեությամբ զվաղվող քաղաքացիական ծառայողների և փորձագետների որակավորման, գնահատման և ատեստավորման կարգը: Այնուամենայնիվ՝ այս դրույթները մեծ մասամբ մնացին չիրականացված: Դրական տեղաշարժ կարելի է համարել ՀՀ կառավարության՝ 2018 թ. -ին ընդունած «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությունը»[12], որը հիմնված է նախորդ օրենսդրության վրա: Ռազմավարությունում առանձին բաժնով ներկայացված են շարունակական և լրացուցիչ, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը: Այս փաստաթղթի ընդունումը հնարավոր դարձրեց էկոլոգիական կրթության վերաբերյալ հանրային ծառայողների համար նախատեսված վերապատրաստումների իրականացումը:
Կրթության ոլորտը կարգավորող ընդհանուր փաստաթղթերի շարքում առանցքային նշանակություն ունեցավ 2004 թ.-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը»: Ռազմավարության 12-րդ կետը ողջ կյանքի ընթացքում ուսուցման մասին է: Այս փաստաթուղթը կարևոր քայլ է ՄԿ քաղաքականության մշակման հարցում, քանի որ այն ընդգծում է Հայաստանում շարունակական կրթության կարևորությունը ու ներկայացնում կոնկրետ քայլերից բաղկացած ճանապարհային քարտեզ: Վերջինիս հիմնական ուղենիշներն են՝ կրթության շարունակականություն, հմտությունների ապահովում՝ հիմնված անհատական կարողությունների, տնտեսության և աշխատաշուկայի կարիքների վրա,

[10] «Կրթության մասին» ՀՀ օրենք (փոփոխվել է 21.06.2014թ.)
https://www.arlis.am/documentview.aspx?docid=9136
[11] «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության մասին» ՀՀ օրենք,
http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1741&lang=arm
[12] «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարություն»,
https://www.irtek.am/views/act.aspx?aid=93900

կրթական ծառայությունների որակ, ծախսերի արդյունավետություն, սոցիալական գործընկերություն, թափանցիկություն և հավատարմագրում, ուսուցում ողջ կյանքի ընթացքում[13]:

2005 թ. -ին Կառավարությունը նաև հաստատեց «Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը»: Փաստաթղթում առաջին անգամ սահմանվեց «մեծահասակների կրթություն» հասկացությունը: Միևնույն ժամանակ այս փաստաթղթերի մշակումը խթանեց քաղաքացիական հասարակության նոր սեկտորի ձևավորումը՝ աջակցելով ՄԿ խթանմանը մեկնարկային մակարդակում: Օրինակ՝ 2005 թ. -ին հիմնադրված «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպությունը Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ (Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի) կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ակտիվորեն մասնակցել է ՄԿ օրակարգի ձևավորմանը և ՄԿ քաղաքականության տարածմանը: Կազմակերպությունը անցկացնում էր «Մեծահասակների կրթության շաբաթներ», հրատարակում «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հանդեսը, ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցելով՝ մասնակցում մեծահասակների կրթության մասին ռազմավարական փաստաթղթերի մշակմանը:

Ռազմավարական փաստաթղթերից հատկապես կարևոր էր «ՀՀ ցկյանս ուսումնառության հայեցակարգը[14]», որն ընդունվել է 2009 թ. -ին: Հարկ է նշել, որ փաստաթղթում առաջին անգամ «կրթություն» բառի փոխարեն կիրառվում է «ուսումնառություն» բառը, որով կարևորվում է սովորողի առանցքային դերը: Հայեցակարգը սահմանում է նաև ցկյանս ուսումնառության սկզբունքները, որոնցից հատկապես կարևոր է անձի ինքնադրսևորման սկզբունքը: Այն է՝ մարդն ինքն է տնօրինում իր ուսումնառության գործընթացը: Փաստաթղթում նշվում են ցկյանս ուսումնառության հիմնախնդիրները, որոնց շարքին են դասվում նաև.

1. ոլորտի կառավարման անկատարություն, անբավարար ֆինանսավորում և ցկյանս ուսումնառության աջակցող թույլ ենթակառուցվածքները,
2. ցկյանս ուսումնառության համար որակավորումների ազգային շրջանակի (ՈԱԾ) բացակայությունը,
3. վիճակագրության բացակայություն,
4. կրթական համակարգի կենտրոնացված կառավարում,
5. միջազգային համագործակցության անբավարար մակարդակ:

Հայեցակարգում նշված հիմնախնդիրների լուծման շրջանակում 2010 թ. -ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունում (ԿԳՆ) ստեղծվեց նոր բաժին:

[13]The Development and State of the Art of Adult Learning and Education (ALE), National Report of the Republic of Armenia,2008, https://uil.unesco.org/fileadmin/multimedia/uil/confintea/pdf/National_Reports/Europe%20-%20North%20America/Armenia.pdf

[14] Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգ, https://www.gov.am/files/meetings/2009/3912.pdf

Ունենալով սահմանափակ աշխատուժ (3 աշխատակից) ՝ Լրացուցիչ և շարունակական կրթության բաժինն ընդհանուր նպատակ ուներ՝ ապահովել լրացուցիչ և շարունակական կրթության (ԼՇԿ) զարգացումը և վերջինս ներմուծել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ (ՄԿՈՒ): Այն նաև պարտավորվում էր համակարգել և կազմակերպել լրացուցիչ և շարունակական կրթությանն առնչվող կազմակերպությունների գործառույթներն ու գործունեությունը:
Բաժնի կանոնադրության վերջին տարբերակը հաստատվել է 2019 թ. -ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից: Համաձայն կանոնադրության՝ բաժինը, ի թիվս այլ գործառույթների, պարտավորվում է լրացուցիչ կրթություն տրամադրող կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և կրթության զարգացման պետական ծրագրերի մշակման միջոցով ներդրում կատարել ոլորտի քաղաքականության մշակման մեջ: Թեև ԼՇԿ բաժինը գործում է 2010 թ. -ից, ո՛չ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրում, ո՛չ էլ դրանից հետո ներկայացված 2016-2025 թթ.-ի և մինչև 2030 թ. կրթության զարգացման պետական ծրագրերի նախագծերում լրացուցիչ կրթությունը, այդ թվում՝ մեծահասակների կրթությունը, ներառված չեն եղել: Մեծահասակների կրթության մասին չի հիշատակվում նաև Կառավարության ծրագրերում կամ միջնաժամկետ ծախսային ծրագրերում:
Չնայած Հայաստանում մեծահասակների կրթության մասին պաշտոնական քաղաքականության բացակայությանը՝ նախարարության կազմում ԼՇԿ (լրացուցիչ և շարունակական կրթություն) բաժնի ստեղծումից հետո ընդունվել են մի շարք առանցքային փաստաթղթեր, որոնք արտացոլում են ՄԿ կարիքները: ՀՀ կառավարության կողմից 2012 թ. -ին ընդունվել է «ՀՀ մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը[15]»: Փաստաթղթի 11-րդ կետը, որը վերաբերում է ԼՇԿ ոլորտին, ներկայացնում է առաջարկներ, որոնք ենթադրում են «Լրացուցիչ և շարունակական կրթության մասին» ՀՀ օրենքի մշակում կամ առկա առանցքային օրենքներում փոփոխությունների կատարման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ ՄԿ ոլորտի կարգավորման նպատակով: 2014 թ. փոփոխություններ կատարելով «Կրթության մասին» ՀՀ օրենքում (1999 թ.) ՝ նախարարությունը, ըստ էության, գնաց ոչ թե մեծահասակների մասին առանձին օրենք մշակելու, այլ գործող օրենքներում փոփոխություններ կատարելու և Ուսուցման ազգային հիմնադրամի ստեղծումը ամրագրելու ճանապարհով (տե՛ս բաժին 1.5) :
2012 թ. -ին ՀՀ ԿԳՆ-ի կողմից ընդունվեց 2013-2017 թթ. «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարությունը և գործողությունների պլանը»: Ռազմավարության մեջ ներկայացված են լրացուցիչ և շարունակական կրթության 9 նպատակները, որոնցում առաջնահերթություն է տրվում մարդու համակողմանի զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորմանը, անձի և անհատականության

[15] «ՀՀ մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը», https://www.irtek.am/views/error.aspx?aspxerrorpath=/%20views/act.aspx

արժևորմանը՝ որպես ինքնուրույն գործունեության սուբյեկտ: Հիմնվելով այս նպատակների վրա՝ փաստաթուղթը սահմանում է հետևյալ ռազմավարական ուղղությունները.

1. լրացուցիչ և շարունակական կրթության գաղափարի խթանում և տարածում,
2. լրացուցիչ և շարունակական կրթությունը կարգավորող քաղաքականության վերանայում,
3. լրացուցիչ և շարունակական կրթության գործարկում և համակարգում,
4. լրացուցիչ և շարունակական կրթության (մեծահասակների կրթության) համապատասխանեցում հանրության և աշխատաշուկայի ժամանակակից կարիքներին,
5. լրացուցիչ և շարունակական կրթության խթանում կարճաժամկետ կրթական ծրագրերի և վերապատրաստումների միջոցով,
6. ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների գնահատում և ճանաչում,
7. լրացուցիչ և շարունակական կրթության ռեսուրսների և արդյունքների ազգային բազայի ստեղծում:

Գործողությունների պլանում անդրադարձ կա Եվրահանձնաժողովի կողմից «Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ երաշխավորությանը, 05.09.2012[16]», ըստ որի՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման ազգային համակարգը պետք է հիմնված լինի 4 ասպեկտների վրա.

1. ուսուցման արդյունքների ճանաչում,
2. դրանց փաստաթղթային հիմնավորում,
3. դրանց համապատասխանեցում գոյություն ունեցող չափորոշիչներին,
4. դրանց վկայագրում:

Վերոնշյալ գործողությունների պլանի շրջանակում 2015 թ. -ին ՀՀ կառավարությունն ընդունեց ծրագրային երկու փաստաթուղթ՝ «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը[17]»: Վերոնշյալ կարգերով հաստատվեցին նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչման գործընթացը հաջողությամբ հաղթահարած թեկնածուներին շնորհվող

[16] https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A52012PC0485
[17] ՀՀ կառավարության որոշում, 10 սեպտեմբերի, 2015, N1062 https://www.irtek.am/views/act.aspx?aid=82058

մասնագիտական որոշակի կարողության տիրապետելու մասին հավաստագրի նմուշը և դրա ներդիրը:
Այս ընթացակարգերից բացի՝ նախարարությունը ստեղծել է նաև Ուսուցման ազգային ռեեստր[18] (ռեեստրի մասին ավելին տես բաժին 1.5-ում) ՝ հետևյալ չորս բաժիններով և համապատասխան գործառույթներով.

1. ուսուցում իրականացնողների (հավակնորդների) ռեեստր,
2. լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների ռեեստր,
3. դասընթացների մասնակցած, գնահատված և վկայագրված մասնակիցների ռեեստր,
4. ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատված և ճանաչված անձանց ռեեստր (գնահատված և ճանաչված անձանց ռեեստր):

Որպես Ուսուցման ազգային ռեեստրը վարող կազմակերպություն՝ ԿԳ նախարարության կողմից ընտրվեց Ուսուցման ազգային հիմնադրամը (ՈՒԱՀ): ՈՒԱՀ-ի սահմանած գործառույթներն ու հավաստագրման ընթացակարգերը ներկայացված են բաժին 1.3-ում:

Ըստ էության՝ 2013-2017 թթ. «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարությունը» համարվում է ավարտված: Գործողությունների պլանը, որը ռազմավարության բաղկացուցիչ մասն է, նույնպես ավարտվել է, սակայն դեռևս չկան դրա իրականացման արդյունքների մշտադիտարկման մասին հրապարակավ հասանելի փաստաթղթեր: Պետությունը դեռ չի հրապարակել ԼԾԿ նոր ռազմավարություն, ինչպես նաև դեռևս հստակ չէ ՀՀ ԿԳՄՄՆ-ում Լրացուցիչ և շարունակական կրթության (ԼԾԿ) բաժնի կարգավիճակը:
Ինչ վերաբերում է ՄԿ մասնագիտականացմանը, ապա 2006 թ. -ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների» ցանկում առկա է նաև «անդրագոգիկան»: Մինչ այժմ այս մասնագիտությամբ ուսուցում չի իրականացվել: Նաև բավականին շփոթեցնող է այն հանգամանքը, որ «անդրագոգիկան» ընդգրկված չէ բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկում՝ որպես մանկավարժության կամ հասարակագիտական այլ գիտակարգի ենթաճյուղ: Գործնականում մեծահասակների կրթությամբ զբաղվողների կամ մեծահասակներին ուսուցանող անձանց կարողությունների զարգացումը տեղի է ունենում դասընթացավարների վերապատրաստման (ToT) ձևաչափով, որը սովորաբար իրականացվում է միջազգայնորեն ճանաչված վերապատրաստման ծրագրերի միջոցով: Օրինակ՝ 2018 թ. -ին Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի Curriculum globALE (CG) շրջանակում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը իրականացրել է դասընթացավարների վերապատրաստումներ (ToT) մեծահասակների հետ աշխատող դասընթացավարաների համար, որոնք կազմակերպվել են նաև 2019 թ. -ին: 2020թ. -ին ջանքերն ուղղված են նշված վերապատրաստման դասընթացի (ToT)

[18] Ռեեստրի գործարկման կարգը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի կողմից 2016թ., N486 որոշմամբ, http://www.irtek.am/views/act.aspx?aid=85666

առցանց և տեղայնացված (հայկական) տարբերակի մշակմանը: Ծրագրի մշակումից հետո այն կփորձարկվի համալսարանների, ՄԿՈՒ ինստիտուտների և այլ ուսումնական հաստատությունների ակադեմիական աշխատակազմի շրջանում, որից հետո հասանելի կլինի մեծահասակների կրթությամբ զբաղվող ավելի լայն խմբերի համար:

1.2 Մեծահասակների կրթության ոլորտի զարգացումները 2018 թվականից հետո

Ինչպես ներկայացվել է նախորդ բաժնում, 2017 թ. -ից ի վեր ռազմավարական կամ օրենսդրական մակարդակում չեն ձեռնարկվել ԼԾԿ բնագավառի զարգացումների շարունակականությունն ապահովող կոնկրետ քայլեր: Այդուհանդերձ, 2018 թ. -ի թավշյա հեղափոխությանը հաջորդող ժամանակահատվածում ձևավորված նոր կառավարության կողմից մշակվել և շրջանառության մեջ են դրվել մի շարք փաստաթղթեր, որից կարել է ենթադրել, որ այդ բնագավառը որոշ չափով մնում է ուշադրության կենտրոնում: Չնայած այդ փաստաթղթերում չեն կիրառվում «լրացուցիչ և շարունակական կրթություն» կամ «մեծահասակների կրթություն» եզրույթները, առկա են այնպիսի դրույթներ, որոնց իրականացումը կարող է մեծապես նպաստել Հայաստանում ՄԿ ոլորտի առաջընթացին:
Օրինակ՝ 2019 թ. փետրվարին ընդունված ՀՀ կառավարության հնգամյա ծրագրում[19] կան մի քանի դրույթներ, որոնք կարևորում են Հայաստանի քաղաքացիների մասնագիտական հմտությունների զարգացումը, որակավորված կադրերի առկայությունը, փափուկ հմտությունները և այլն: Հետաքրքրական է, որ այդ պահանջները սահմանվում են փաստաթղթի տնտեսության մրցունակության և ստեղծագործ ներուժին առնչվող բաժնում, սակայն իրենց արտացոլումը չեն գտնում հենց «Կրթություն» բաժնում: Փաստաթուղթը սահմանում է, որ «Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար պետք է հասանելի դառնան այնպիսի կրթական ծրագրեր, որոնք կնպաստեն նրանց գիտելիքները և գործարար կարողությունները ժամանակի պահանջներին համապատասխանեցնելուն[20]»: Անվիճելի է, որ այս ուղղությամբ կոնկրետ քայլերի ձեռնարկումը կարող է հիմք դառնալ մեծահասակների կրթության բնագավառում տարբեր ներդրումներ և նախաձեռնությունների համար:

Այս նպատակին է ծառայում 2018-2019 թթ. ՀՀ կառավարության նախաձեռնած «Աշխատի՛ր, Հայաստան» ծրագիրը, որը ցույց տվեց հայ ժողովրդի՝ ավելի լավ ապագային ուղղված ինստիտուցիոնալ և իրավական փոփոխությունների փաթեթ ներմուծելու Կառավարության հանձնառությունը: Ծրագրի առաջնային նպատակներից է կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը: Այս ռազմավարական փաստաթուղթը առանձնապես կարևորում է «ոչ ֆորմալ և հատկապես հարատև կրթության գաղափարի իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս անձին մշտապես զարգացնելու իր մարդկային կապիտալը՝ հետ չմնալով աշխատաշուկայի պահանջներից»: Աշխատունակությունն ու զբաղվածությունը «Աշխատի՛ր, Հայաստան»-ի առանցքային կետերն են: Միևնույն ժամանակ փաստաթղթում խոսվում է այն մասին, որ ներկայումս «Հայաստանում հարատև կրթության մշակույթը չի արմատավորվել, մինչդեռ տնտեսության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները պահանջում են վերապատրաստման ծրագրերի ավելացում»:

[19] Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր (2019), https://www.gov.am/files/docs/3347.pdf
[20] Նույն տեղում:

Առաջարկվում է բացահայտել և լրացնել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջև գոյություն ունեցող բացերը: Չնայած նրան, որ ծրագրի գործողություններից 2.8 կետը վերաբերում է մասնավոր հատված-պետություն համագործակցության միջոցով վերապատրաստման հնարավորությունների ընդլայնմանը, ներառված են բազմաթիվ այլ գործողություններ ևս, որոնք նույնպես ենթադրում են ոչ ֆորմալ կրթության նախաձեռնությունների իրականացում: Կառավարությունն ընդունել է մի շարք այլ փաստաթղթեր ևս, որոնք ուղղակիորեն չեն առնչվում կրթությանը, բայց հեռանկարում ՄԿ-ի ոլորտի համար դրական զարգացումներ կարող են ապահովել: Օրինակ՝ «ՀՀ կառավարության 2019-2023 թթ. զբաղվածության ռազմավարությունը[21]» այն եզակի փաստաթղթերից է, որում խոսվում է միջինից բարձր տարիքի և տարեց մարդկանց մասին: Ռազմավարությունը վերոնշյալ թիրախային խմբի անձանց համար, ի թիվս այլ միջոցառումների, սահմանում է.

1. աշխատատեղի կրճատման կամ երկարատև գործազրկության ռիսկերի դեպքում նոր մասնագիտական կարողությունների և հմտությունների ուսուցանում,
2. մասնագիտական կարողությունների և հմտությունների փոխանցում երիտասարդներին,
3. աշխատանքից ազատման ռիսկ ունեցող տարեց անձանց աշխատանքի տեղավորում՝ վերամասնագիտացման միջոցով,
4. երիտասարդներին տարեցների աշխատանքային փորձի և մասնագիտական կարողությունների փոխանցման խթանում՝ նպաստելով տարեցների՝ հասարակությունում առավել լիարժեք ներառմանը:

«Աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈՒ) զարգացման հայեցակարգը[22]», որը ձևավորվել է Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) և Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի (ՄԿՈՒՀԱԽ) աջակցությամբ, ընդունվել և ներառվել է «Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսուցման զարգացման հայեցակարգում և 2019-2025 թթ. գործողությունների ցանկում»: Փաստաթղթի նպատակը Հայաստանում ՄԿՈՒ ոլորտում աշխատանքի վրա հիմնված ուսուցման զարգացմանն անհրաժեշտ քաղաքականության շրջանակի ձևավորումը և ԱՀՈՒ նոր ձևերի աստիճանական ներդրման համար անհրաժեշտ գործողությունների սահմանումն է:

Հայեցակարգում նշվում է, որ աշխատանքի վրա հիմնված ոչ ֆորմալ ուսուցումը իրականացվում է որպես մասնավոր նախաձեռնություն՝ հիմնականում առանց ձեռնարկությունների միավորումների, աշխատակիցների կամ պետության պարտադիր համակարգված մասնակցության: Հայաստանում ոչ ֆորմալ կրթության արդյունքում ստացած հմտությունների հավաստագրման (վավերացման), ինչպես նաև

[21] ՀՀ 2019-2023թթ. զբաղվածության ռազմավարություն, http://www.mlsa.am/?p=24273
[22] Աշխատանքի վրա հիմնված ուսուցման զարգացման հայեցակարգ (2019), http://escs.am/files/files/2019-12-01/901c360398db65cd035997d9e41ae789.pdf

աշխատանքի վրա հիմնված ինֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման ընթացակարգերի բացակայության պատճառով սովորողները զրկվում են կրթության հետագա շարունակության հնարավորությունից: Հայեցակարգում առաջարկվում է ճանաչել համապատասխան մասնագիտական միավորումների և իրավասություն ունեցող կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքային ոչ ֆորմալ կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների մասնակցության ուսումնառության արդյունքները: 2021 թ.-ին նախատեսվում է ոչ ֆորմալ ԱՀՈՒ միջոցով ձեռք բերված որակավորումների հավաստագրման և ճանաչման կառուցակարգի գործարկում, ինչպես նաև ԱՀՈՒ ծրագրերում ընդգրկված դասավանդողների վերապատրաստման համակարգի կառուցվածքի և ընթացակարգի մշակում: Բացի վերոնշյալ փաստաթղթերից՝ կրթության ոլորտի այլ փաստաթղթերում մեծահասակների կրթության և ուսումնառության մասին գրեթե չի հիշատակվում: Վերջին տարիների միջնաժամկետ ծախսային ծրագրերում վերապատրաստուումներին հատկացվող ֆինանսավորման վերաբերյալ համակարգային մոտեցում չկա: 2020 թ. -ի՝ կրթության ոլորտին հատկացված պետական բյուջեն ուղղվել է յոթ ծրագրի, որոնցից և ոչ մեկը կապված չէ ՄՈՒԿ-ի հետ: Կառավարության կողմից 2019 թ.-ին ընդունված 2019-2023 թթ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ԼԾԿ-ը հիշատակվում է ընդամենը երկու անգամ: Առաջինը վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանն ու ատեստավորմանը, իսկ երկրորդը՝ ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության համակարգի զարգացմանը: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) 2020 թվականի տարեկան զեկույցում ՄԿՈՒ մասին հիշատակված չէ[23]:

[23] 2020 թ.-ի օգոստոսին ԿԳՄՍ նախարարի տեղակալը, ներկա գտնվելով ՄՈՒԿ ազգային զեկույցի կազմման սեմինարին, նշեց կրթության նոր ռազմավարության մասին, որը ենթադրաբար կներառի առանձին բաժին ԼԾԿ, բայց ոչ ՄՈՒԿ վերաբերյալ:

1.3. Մեծահասակների կրթության որակավորումների շրջանակներ և ուսումնառության արդյունքների ճանաչում

Որակավորումների շրջանակը (ՈՇ) կրթական բարեփոխումների հիմնական գործիքն ու որակի ապահովման համակարգերի (ՈԱՀ) ընդունված շարժիչն է: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամենավերջին «Որակավորումների տարածաշրջանային և ազգային շրջանակների գլոբալ հաշվառման[24]»՝ աշխարհում ավելի քան 100 երկիր արդեն մշակել ու ընդունել է ՈՇ-ներ՝ կրթական համակարգերն արդիականացնելու համար: Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոնը (ՄՈՒԶԵԿ/CEDEFOP)[25] նշում է, որ 36 երկիր (օր.՝ Ավստրիա, Դանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Լեհաստան, Սլովենիա, Շվեդիա և Մեծ Բրիտանիա (Շոտլանդիա)) առաջարկում են համապարփակ ՈԱՇ, որը ներառում է որակավորումների բոլոր տեսակներն ու աստիճանները՝ ֆորմալ կրթությունից և ուսուցումից մինչև չկանոնակարգված կամ մասնավոր որակավորումները, որոնք էլ իրենց հերթին կարող են ծառայել ՄՈՒԿ նպատակներին: Եվրոպական շատ երկրներ ներմուծում են ՈՇ՝ հիմնվելով ուսումնառության արդյունքների աստիճանների վրա՝ սովորաբար ընդգրկելով որակավորումների զանազան տեսակներ, որոնք էլ դասակարգվում են յուրաքանչյուր երկրում համապատասխան կարգավորումների համաձայն: Այս որակավորումները կարելի է բաժանել 3 խմբի.

Կրթական որակավորումներ	• Ձեռք են բերվում ֆորմալ կրթության և վերապատրաստման համակարգի միջոցով (հիմնական ընդհանուր կրթություն, ՄԿՈՒ և բարձրագույն կրթություն) : • Կրթական որևէ աստիճանի ձեռքբերում:
Մասնագիտական որակավորումներ	• Կողմնորոշում դեպի աշխատաշուկա: Ձեռք են բերվում որևէ մասնագիտության հետ կապված մի շարք առաջադրանքներ կատարելու հմտությունների գնահատման միջոցով: • Գիտելիքը, հմտություններն ու կարողությունները կարելի է ձեռք բերել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով:

[24] UNESCO, Global Inventory of Regional and National Qualifications Frameworks, Volume II: National and Regional Cases, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000260922

[25] https://www.cedefop.europa.eu/fi/events-and-projects/projects/national-qualifications-framework-nqf#:~:text=38%20countries%20have%20officially%20established,national%20qualifications%20frameworks%20(NQFs)%3B

Լրացուցիչ որակավորումներ	• Ձեռք են բերվում այնպիսի գիտելիքների, հմտությունների ու կարողությունների միջոցով, որոնք լրացնում են արդեն գոյություն ունեցող որակավորումը, հնարավորություն ընձեռում աշխատաշուկայում հատուկ առաջադրանքներ կատարել: • Լրացուցիչ որակավորումները ոչ թե բարձրացնում, այլ լրացնում են սովորողների որակավորման մակարդակը:

Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որոնք ունեն ՈԱ գործող համակարգեր՝ ներքին (ՈՆԱ) ու արտաքին (ՈԱԱ) ընթացակարգերով, հավատարմագրման պրակտիկայով ու ընթացակարգերով: Մակրո մակարդակում Հայաստանի ՈԱ-ը կանոնակարգվում է «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը» և «ՀՀ-ում մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները[26]» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումներով: Մեզո (ինստիտուցիոնալ) մակարդակում ՈԱ-ն իրականացվում է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ԵՉՈՒ) հիման վրա, որոնց միջոցով իրականացվում են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները: ՀՀ-ն ունի նաև որակավորումների ազգային շրջանակ (ՈԱԾ), որն ընդունվել է Կառավարության 2011 թ. որոշմամբ: Կառավարության կողմից 2011 թ. ստեղծված Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) միակ մարմինն է (դեռևս՝ ինքնավար), որը պատասխանատու է Հայաստանի մասնագիտական կրթության որակի ընդհանուր համակարգի համար: ՈԱԱԿ-ը իրականացնում է մասնագիտական կրթական հաստատությունների հավատարմագրումը՝ համաձայն պետության հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների: Հիմնադրամի գործունեությունը ծավալվում է և՛ ՄԿՈՒ, և՛ բարձրագույն կրթության ոլորտներում, սակայն մարդկային սահամանափակ ռեսուրսների պատճառով դժվարություններ են առաջանում երկուսին հավասարապես առաջնահերթություն տալու հարցում: Այս պատճառով, բարձրագույն կրթության (ԲԿ) ոլորտում գործող մասնավոր կամ միջպետական հաստատությունները ձեռք են բերել որակի ապահովման (ՈԱ) ավելի ուժեղ ինքնավարության ավանդույթ:
Ինչ վերաբերում է պրակտիկաներին, ՄԿՈՒ կառույցները ավելի շատ կախում ունեն ԿԳՄՍՆ-ից և Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնից (ՄԿՈՒՀԱԿ), որը մշակում է ՄԿՈՒ կրթական չափորոշիչները: ՈԱԱԿ-ն ու ՄԿՈՒՀԱԿ-ը համագործակցում են ՄԿՈՒ ոլորտում:

ՈԱԱԿ-ի առաքելությունը, նպատակները և ռազմավարական ծրագիրը չեն ներառում ՈԱ և հավատարմագրման մասին ցուցումներ կրթության այն ձևաչափերի

[26] TEMPUS ARMENQA project, http://armenqa.am/wp-content/uploads/2017/06/NQFA-Self-Certification-Report.pdf

շրջանակներում, որոնք ֆորմալ որակավորման ոլորտից դուրս են: Այնուամենայնիվ, համակարգը հիմնված է կրթության և ուսուցման երեք ընդհանուր մոտեցման վրա.

1. ուսուցման արդյունքների որակի ապահովում (մասնագիտական որակավորմանը նպաստող գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացում),
2. կրթական ծրագրերի որակի ապահովում (ակնկալվող որակի արդյունքներն ապահովող գործընթացներ, որոնք գտնվում են մասնագիտական որակավորման և դրա հետագա զարգացման կարիքների մակարդակում),
3. կազմակերպության ինստիտուցիոնալ որակի ապահովում (կամ ինստիտուցիոնալ կառավարման համակարգի որակի ապահովում), որն իրականացնում է որակի սահմանված չափանիշներին համապատասխան կրթական ծրագրեր, որոնց բավարարման մակարդակը գնահատվում է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով:

ՈԱԱԿ-ի կանոնադրության[27] համաձայն՝ իր շահառուները կրթության ոլորտում պետության կողմից լիազորված մարմիններն են, կրթական հաստատություններն ու կազմակերպությունները, որոնք մասնագիտական կրթություն են ապահովում Հայաստանում՝ դրանով իսկ իր ծառայությունների շրջանակից դուրս թողնելով ոչ պետական կառույցներին, կրթություն և ուսուցում իրականացնողներին: Այնուամենայնիվ, համաձայն նույն փաստաթղթի՝ հիմնադրամի ֆինանսական ակտիվները կարող են ձևավորվել ոչ միայն ՀՀ պետական բյուջեից հատկացումների, այլև անհատների ու իրավաբանական անձանց նվիրատվությունների ու ներդրումների, միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների, հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության միջոցով և այլ տարբերակներով:

Հաշվի առնելով որակավորման շրջանակի վերոնշյալ տարրերը՝ ամփոփելով կարող ենք նշել, որ ՈԱԱԿ-ի ուսումնառության արդյունքների վրա հիմնված մեթոդաբանությունը, ինչպես նաև Կառավարությունից ֆինանսական կախվածություն չունենալու հանգամանքը կարող է թույլ տալ ունենալ ազգային ընդլայնված ՈԱ համակարգ, որը կներառի ոչ ֆորմալ ու ինֆորմալ ՄՈՒԿ ուսումնառության արդյունքները:
Հայաստանի ՈԱԾ-ը ստանդարտացված ֆորմալ որակավորումների՝ ընդհանուր առմամբ համեմատելի շրջանակ է և կարող է սկզբունքորեն համադրվել «Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի» հետ: Սա նպատակ ունի ավելի շատ թափանցիկություն հաղորդելու կրթության և վերապատրաստումների համակարգի կողմից տրամադրվող որակավորումներին, օժանդակելու գործատուներին աշխատուժի հմտությունները գնահատելու հարցում և հնարավորություն ստեղծելու Կառավարությանը հմտությունների համապատասխանեցման համար որոշումներ կայացնել: Այնուամենայնիվ, իր ներկայիս կարգավիճակով այն չի նպաստում բոլոր խմբերի սովորողների

[27] ՈԱԱԿ կանոնադրություն, http://www.anqa.am/en/about-us/mission/anqa-charter/

առաջընթացին և չի բավարարում նրանց՝ աշխատանքային և/կամ մասնագիտական հաճախ փոփոխվող կարիքները: Հիմնական մարտահրավերն այն է, որ ուսումնառության, դրա ուղիների և մեթոդների, աստիճանների, ճանաչման պրակտիկայի և այլնի բազմազանությունը պահանջում են ՈԱ ավելի ճկուն հարացույց, որը արտացոլված չէ ՈԱԾ-ում: Այս առումով մեծահասակ սովորողները դուրս են մնում որակավորման այս շրջանակից, որը նպատակահարմար չէ նրանց հարատև ուսումնառության և/կամ մասնագիտական առաջընթացի համար:

Մյուս կողմից «Որակավորումների ազգային ոլորտային/սեկտորիալ շրջանակը»[28] (որը դեռ փորձնական փուլում է Հայաստանում) ենթադրում է նոր, ավելի ճկուն և դինամիկ աշխատանքային հարաբերությունների, ինչպես նաև առաջարկ-պահանջարկ կատեգորիաների ստեղծում, որը կրթությունը ավելի կմոտեցնի բիզնեսի տրամաբանությանը: ՈԱՈԾ-ը կարող է կիրառվել գործատուների կողմից ուսումնառության արդյունքների ճանաչման համար, քանի որ այս շրջանակը թույլ է տալիս խթանել աշխատուժի շարժունակությունը և նախընթաց հմտությունների հնարավոր գնահատումը՝ որպես դրա բաղկացուցիչ մաս: Այն կարող էր կիրառվել ՄՈՒԿ որևէ բնագավառում ծառայություններ տրամադրողներին կողմնորոշելու համար, ինչպես նաև որպես զբաղվածության քաղաքականության ելակետ:

Այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ ներկայումս Հայաստանում թե՛ ազգային, թե՛ ոլորտային ՈԾ-ները չեն տրամադրում նկարագրիչներ ու հասանելիություն ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության եղանակներով ձեռք բերված որակավորումներին: Ձևավորումից ի վեր ՈԱԾ-ը սիստեմատիկ կերպով չի վերանայվել որակավորումների մատչելիությունը, հեռանկարային լինելը ու ճկունությունը մեծացնելու համար: Սակայն ՄՈՒԿ համատեքստում ՈԱԾ՝ ՈՒԱ-ի վրա հիմնված մոտեցումը կարող է ՄՈՒԿ կարողությունների զարգացման և ճանաչման մեթոդական հիմք լինել: Ե՛վ ՈԱԾ, և՛ ՈՈԾ կարող են հիմքեր ստեղծել ՄՈՒԿ որակավորումները ՄԿՈՒ (մակարդակ 5) և ԲԿ (մակարդակ 6-8) մեջ հավասարապես ներմուծելու համար, ինչը ավելի հեշտ կարող է իրականացվել զարգացած կառույցների օժանդակությամբ:

«Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը», ինչպես նաև «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը» (տե՛ս Հավելված 1), որոնց մասին արդեն նշվել է բաժին 1.1-ում, երկու կարևոր դիտարկումների տեղիք են տալիս, որոնք ուղղակիորեն ազդում են ՄՈՒԿ որակավորումների զարգացման ընթացքի վրա.

- Վերապատրաստման, կարճաժամկետ խմբային և անհատական մասնագիտական դասընթացների միջոցով իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի մինչ 5-ամսյա տևողության պարագայում որակավորում չի շնորհվում: ՈՒԱՀ-ի գլխավոր նպատակն է Պետական ռեեստրի ներմուծման միջոցով մշակել ու կիրարկել վերոնշյալ ծրագրերի հավաստագրման

[28] Manual on Sectoral Qualification Framework Operationalization, EU TEMPUS ARARAT project, p. 55

համակարգ՝ որակի միջազգային չափանիշներին համապատասխան: Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ ռեսուրսների սակավության պատճառով արդյունքները (օրինակ՝ ՈՒԱՀ-ի կողմից տրամադրված ավելի քան 200 հավաստագիր[29]) դեռ պետք է բարելավվեն տնտեսության ոլորտի գործընկերների և ոլորտային փորձագիտական համայնքների ավելի լայն ներգրավվածության հաշվին:

Ուսուցման ազգային հիմնադրամը, որն ստեղծվել է 2011 թ. Կառավարության N 1550 որոշմամբ[30], սոցիալական գործընկերների (պետություն, գործատուներ և արհեստակցական միություններ) անունից լիազորված է համակարգելու և կազմակերպելու ԼԾԿ իրականացումը, օժանդակելու ԼԾԿ արդյունքերի գնահատման և ճանաչման համակարգերի գործարկմանը: Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են.

- Աջակցել վերապատրաստման կազմակերպմանը, որակավորման բարձրացմանը և աշխատողների, աշխատազուրկների ու աշխատանք փնտրողների հմտությունների զարգացմանն ուղղված վարաորակավորման դասընթացների մշակմանը:
- Կազմակերպել ուսումնական և վերապատրաստման դասընթացներ, որոնք կնպաստեն որակավորման բարձրացմանն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցմանը:
- Աջակցել անկախ հավաստագրման համակարգի ներդրմանը:
- Աջակցել ՄՈՒԿ խնդիրների լուծմանը:
- Նպաստել ՄԿՈՒ տրամադրող կազմակերպությունների արդյունավետ գործող ցանցի ձևավորմանը:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման նպատակով Հիմնադրամը ձևավորում է մասնագիտական խումբ (գնահատողների թիմ), որոնք ընտրվում են ուսուցման ազգային ռեեստրում գրանցված տվյալ մասնագիտության, զբաղմունքի բնագավառների ներկայացուցիչներից (կրթություն-բիզնես): Գնահատող կարող են լինել մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպության մասնագետները, արտադրական կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագետները, գործատուների ներկայացուցիչները, անկախ մասնագետները և փորձագետները:
Գնահատումն ու ճանաչումը կամավոր գործընթաց են, և յուրաքանչյուրը կարող է մասնակցել դրան: Թեկնածուն իր կարողություններն ու հմտությունները ճանաչելու հայտադիմում է ներկայացնում հիմնադրամին: Այնուհետև հիմնադրամը կազմակերպում է ընթացակարգը հետևյալ կերպ.

- Դիմումի գնահատում և ճանաչում, որը ներառում է ինքնագնահատման և խորհրդակցության միջոցով անձի փորձառության որոշարկում:

[29] Տվյալների տրամադրող՝ ՈՒԱՀ տնօրեն Մարինե Հակոբյան (տե՛ս տեղեկատվություն տրամադրած հիմնական անձանց ցանկը)
[30] http://www.irtek.am/views/act.aspx?aid=62533

- Թեստավորման և հարցազրույցի միջոցով անձի հմտությունների և կարողությունների ստուգում:
- Հմտությունների և կարողությունների պաշտոնական գնահատում, որը ներառում է գրավոր և բանավոր հարցումներ, աշխատանքային գործունեության ստուգում:
- Գնահատման արդյունքների ճանաչում և հավաստագրում:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման գործընթացը հաղթահարած թեկնածուին շնորհվում է մասնագիտական որոշակի հմտությունների տիրապետելու մասին փաստող հավաստագիր և դրա ներդիրը: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման համակարգի կողմից գնահատված արդյունքները կարող են բավարար նախապայման լինել աշխատաշուկա մտնելու և որևէ աշխատանքային հաստիք զբաղեցնելու համար:
Հիմնվելով այս և այլ տվյալների վրա՝ Ուսուցման պետական ռեեստրում ձևավորվում են.

- ուսուցում իրականացնողների (հավակնորդների) ռեեստր,
- լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների ռեեստր,
- դասընթացներին մասնակցած, գնահատված և վկայագրված անձանց ռեեստր,
- ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքները գնահատված և ճանաչված անձանց ռեեստր:

Իր լիազորությունների շրջանակում հիմնադրամը կարող է նաև ծավալել ակտիվ առևտրային գործունեություն բիզնեսի ոլորտում, ինչպիսիք են փորձագիտական ու վերլուծական խորհրդատվությունը, հրատարակչությունը, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպումը, բիզնեսի աջակցման և բիզնես-ծրագրերի մշակումը և այլն: Կենտրոնն ունի ընդամենը 6 աշխատակից. սա վկայում է նման լայնածավալ գործունեություն իրականացնելու համար անբավարար ինստիտուցիոնալ ռեսուրսների մասին: Չնայած ի սկզբանե ՈՒԱՀ-ի հիմնական պարտականությունը ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների վավերացման (գնահատում և ճանաչում) համակարգի կիրառումն էր՝ ռեսուրսներ ներգրավելով հիմնականում միջազգային դոնոր կազմակերպություններից և մասնավոր ոլորտից՝ մատուցած ծառայությունների դիմաց, սակայն դա տեղի չունեցավ այնպես, ինչպես ծրագրվել էր: Հետևաբար ոչ ֆորմալ ուսումնառության հավաստագրման, հավատարմագրման և վավերացման գործընթացները՝ որպես ՄՈՒԿ որակի ապահովման ամենահայտնի մեխանիզմներ, առաջարկվում են ՈՒԱՀ-ի կողմից կոնկրետ դեպքերի հիման վրա՝ սահմանափակելով ուժեղ ինստիտուցիոնալ պրակտիկայի զարգացումը: Համաձայն փորձագետների հարցազրույցների՝ չկան ո՛չ վավերացման ձևաչափը սահմանող հանրամատչելի կանոնագրքեր, ո՛չ էլ վավերացումը գնահատողների արտոնագրերի տրամադրման կամ չեղարկման ընթացակարգեր: ՈՒԱՀ-ի ներգրավվածությունը ոչ ֆորմալ ուսումնառության հավաստագրման, հավատարմագրման և վավերացման գործընթացներում առանձնապես բարենպաստ չեղավ նաև մեծահասակների կրթությամբ զբաղվող լիցենզավորված վերապատրաստողների ցանց ստեղծելու հարցում:

Ուստի ֆինանսավորման սղության պատճառով հիմնադրամը ամբողջությամբ չի իրականացնում ոլորտի համար խիստ կարևոր բազմաթիվ գործառույթներ՝ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման մշտադիտարկումից և արդյունքների ճանաչումից մինչև Ռեեստրի վարում: Ֆինանսավորման բացակայության պատճառով մինչ օրս չի ձևավորվել Ռեեստրի տվյալների էլեկտրոնային շտեմարանը: Կրթական կազմակերպությունների մասին տվյալները պարզապես գրանցվում են հիմնադրամում և հասանելի չեն հանրության համար: Մինչդեռ Ռեեստրի գոյության հիմնական նպատակը դրա թափանցիկությունը պետք է լինի, որպեսզի այն դառնա կապող օղակ լրացուցիչ կրթություն առաջարկողների ու դրա կարիքն ունեցողների միջև:
Բացի այդ՝ ոլորտային ոչ հստակ քաղաքականության պատճառով իրավական լուծումներն ու ընթացակարգերը ևս մնացել են անավարտ: Օրինակ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թ. 83-Ն հրամանով սահմանվել է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը, որտեղ տեղ են գտել ընդամենը 6 մասնագիտություն: Սպասարկման (ծառայություններ) ոլորտից այս ցանկում, օրինակ, ներկայացված են միայն «Հանրային սննդի մատուցում» և «Խոհարարական գործ» մասնագիտությունները: 2016 թ. -ի հաստատումից ի վեր ցանկը չի լրամշակվել և ընդլայնվել, մինչդեռ ակնհայտ է, որ ցանկում սպասարկման լայն ոլորտից ավելի շատ ավելի մեծ թվով մասնագիտությունների ու զբաղվմունքների ներկայացվածությունը կարող էր նպաստել լրացուցիչ մասնագիտական կրթության բնագավառների զարգացմանը:

Ինչպես ներկայացված է այս փաստաթղթի հաջորդ բաժնում, Հայաստանում ՄԿ ծրագրեր իրականացվում են նաև տեղական ՔՀԿ-ների և այլ համապատասխան ծառայություններ տրամադրողների կողմից՝ միջազգային դոնորների ֆինանսավորմամբ: ՄՈՒԿ համար ՈԱ ընթացակարգերի բացակայության պատճառով այս կազմակերպությունների կողմից առաջարկվող ՄՈՒԿ ծրագրերի մեծ մասը կիրառում է որակի գնահատման ներքին ընթացակարգեր, ինչպիսիք են նախաթեստերն ու հետթեստերը (pre/post tests), ամփոփիչ հարցումները և մասնակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումները:
Սա ՈԱ մեկ այլ մոտեցում է, որը, սակայն, համակարգային բնույթ չունի, և, որպես այդպիսին, չի նպաստում ՄՈՒԿ ոլորտի ինստիտուցիոնալացմանը կամ կանոնակարգմանը: Այնուամենայնիվ, այն մի կողմից խթանում է ՄՈՒԿ պրոֆեսիոնալիզացմանը տեսանելիության բարձրացման, հեղինակության և վստահության ձեռքբերման, մյուս կողմից՝ փաստերի և գործողությունների վրա հիմնված պրակտիկաների ներդրման միջոցով:

1.4 Մեծահասակների կրթության միջազգային օրակարգ և Հայաստանի Հանրապետություն

Գործողությունների բելեմյան շրջանակ (ՅՈՒՆԵՍԿՕ)

Մեծահասակների կրթությունը մշտապես գտնվել է միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1949 թ. -ից սկսած անց է կացնում Մեծահասակների կրթության միջազգային կոնֆերանսներ (CONFINTEA): Կոնֆերանսների շարքը (դեռևս 6-ն են տեղի ունեցել) անց է կացվում 12 տարին մեկ անգամ: Վերջինը տեղի է ունեցել 2009 թ. -ին էր՝ Բրազիլիայի Բելեմ քաղաքում (ներկա էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների 144 պատվիրակությունից, այդ թվում՝ Հայաստանի), որտեղ ընդունվել է մեծահասակների կրթության և ուսումնառության միջազգային ք

աղաքականության հիմնասյուներից մեկը՝ Գործողությունների բելեմյան շրջանակը (ԳԲՇ)[31]: ԳԲՇ-ն ներկայացնում է առաջարկություններ մեծահասակների կրթության 5 ոլորտի և ուսումնառության 3 բնագավառի գործողությունների համար.



[31] Գործողությունների բելեմյան շրջանակ/ Belem Framework for Action, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000187789_mul

Գծ. 1. Գործողությունների բելեմյան շրջանակի սահմանած գործողությունների հիմնական ոլորտներն ու ուսումնառության բնագավառները:

Հայաստանում ՄՈՒԿ մասին փաստաթղթերում միայն մասամբ է խոսվում Գործողությունների բելեմյան շրջանակում առաջարկվող վերոհիշյալ ոլորտների և ուսումնառության բնագավառների մասին: 2009 թ.-ից սկսած ՅՈՒՆԵՍԿՕ-ն հրապարակում է Մեծահասակների ուսումնառության և կրթության գլոբալ զեկույցներ (GRALE), որոնք կազմվում են անդամ երկրների կրթության նախարարությունների կողմից ներկայացված ազգային զեկույցների հիման վրա: Հայաստանը 2008, 2012 և 2015 թվականներին ներկայացրել է ազգային զեկույցներ: 2008 թ.-ի առաջին ազգային զեկույցը, որը շարադրված էր պատմողական ձևաչափով, բավականին հանգամանալից ներկայացնում էր մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) վիճակը Հայաստանում:

Զեկույցում հաղորդվում էր օրենսդրական բացի մասին և նշվում, որ «Հայաստանի Հանրապետությունում մեծահասակների կրթության մասին օրենքի բացակայության պատճառով ներկայումս այդ ոլորտի պետական կարգավորման համակարգ նույնպես չկա: Այդուհանդերձ, որոշ նախարարություններ (Կրթության և գիտության, Արդարադատության, Առողջապահության, Մշակույթի և այլն) և գործակալություններ (ոստիկանություն, մաքսային, հարկային և այլն) վերապատրաստումներ և որակավորման բարձրացման դասընթացներ են կազմակերպում իրենց ոլորտի մասնագետների, ինչպես նաև գործազուրկների և աշխատանք փնտրողների համար, որի կազմակերպմամբ զբաղվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը»[32]:

2012 և 2015 թթ. զեկույցներում պետությունները պարզապես լրացրել են ազգային զեկույցների հիմքում ընկած հարցումները: 2012 թ. զեկույցի այն հարցին, թե արդյոք Հայաստանում կա «գրագիտություն» հասկացության սահմանում, տրվել է դրական պատասխան: Սակայն պատասխանի նշված տարբերակը վերաբերում էր հանրակրթությանը, որը չի կարելի համարել սահմանում[33]: 2015 թ. -ի ազգային զեկույցում[34] ևս մեկ հարց կար Գործողությունների բելեմյան շրջանակի ուղղությամբ տարվող քայլերի վերաբերյալ: Նախարարությունը նշում է, որ քայլեր են ձեռնարկվել միայն քաղաքականության մշակման ոլորտում: Զեկույցից պարզ դարձավ, որ չկան տվյալներ այն մասին, թե մեծահասակների քանի տոկոսն է մասնակցել ՄԿ ծրագրերի: Չնայած տվյալների բացակայությանը՝ ինչ-որ ձևով նշվել է, որ ծրագրերին մասնակցած կանանց և տղամարդկանց թիվը հավասար է եղել: 2009 և 2012 թթ. ազգային զեկույցներում ներկայացվում են տվյալներ մեծահասակների ուսումնառության և կրթության համար կատարվող ծախսերի վերաբերյալ, բայց 2015 թ. -ի ազգային զեկույցում տվյալներ չկան այն մասին, թե կրթության ոլորտին հատկացվող բյուջեի քանի տոկոսն է ծախսվում ՄՈՒԿ վրա: Նշվում է, որ 2015 թ.-ին մոտավորապես նույն

[32] GRALE National Report of the Republic of Armenia, point 1.1.3 ենթակետ

[33] https://uil.unesco.org/fileadmin/download/en/national-reports/europe-and-north-america/Armenia.pdf

[34] https://uil.unesco.org/i/doc/adult-education/grale-3/national-reports/armenia.pdf

գումարն է ծախսվել, ինչ 2009 թ.-ին, և առաջիկա տարիներին ցուցանիշը նույնն է մնալու:
2019 թ. -ի վերջին զեկույցն ամբողջացվել է 2020 թ. -ի օգոստոսին մեծահասակների կրթության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև տեղի ունեցած քննարկման արդյունքում՝ նախաձեռնված ԿԳՄՍՆ և Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի հայաստանյան գրասենյակի կողմից: Մոտ 20 փորձագետ ներկա են գտնվել համակցված՝ դեմ առ դեմ և առցանց (Zoom) նիստին՝ ուսումնասիրությանը համար նախատեսված հարցաշարը համատեղ վերանայելու և նախարարությանը մեծահասակների ուսումնառության և կրթության գլոբալ զեկույցում (GRALE) զետեղվելիք հաջորդ ազգային զեկույցի վերաբերյալ հետադարձ կապ տրամադրելու համար: Այս հանդիպման ամենաառանցքային ձեռքբերումներից մեկն այն էր, որ փորձագետների համայնքը համաձայնել է, որ ՄՈՒԿ քաղաքականության մեջ էական առաջընթաց տեղի չի ունեցել: Քննարկումից մի քանի ամիս անց նախարարությունն ավարտին է հասցրել զեկույցը և այն ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ պաշտոնական հրապարակման:

Կայուն զարգացման նպատակներ (ՄԱԿ)

Մեծահասակների կրթությունն (ողջ կյանքի ընթացքում ուսում եզրույթով) ընդգրկված է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներում (ԿԶՆ), որոնք ընդունվել են 2015 թ.՝ որպես Հազարամյակի նպատակների հաջորդ փուլ: Կայուն զարգացման նպատակներից 4-րդը վերաբերում է կրթությանը: Հատկապես շեշտվում է ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը: Նպատակ 4-ը սահմանում է՝ «*Ապահովել ներառական և համապատասխան որակյալ կրթություն և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները*»:

4-րդ նպատակի ցուցանիշներից 3-ը՝ 4.3-ը, 4.4-ը և 4.6-ը, իրենց ենթացուցանիշներով ուղղակիորեն վերաբերում են մեծահասակների կրթությանը և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության մեջ նրանց դերին: ՀՀ վիճակագրական կոմիտեն (ՎԿ) հավաքագրում է Հայաստանում ԿԶՆ ցուցանիշները՝ դրանք տեղադրելով պաշտոնական կայքում, որը նվիրված է ԿԶՆ-ի[35] մետատվյալների հավաքագրմանն ու վերլուծությանը: Կայքը դեռևս զարգացման նախնական փուլում է, և պահանջվում է տվյալների համակարգված մուտքագրում: Ցավոք մեծահասակների կրթության վերոնշյալ ցուցանիշներից որևէ մեկով ազգային տվյալներ չեն ներկայացվում: ՎԿ-ի հաղորդած միակ ազգային տվյալը ուսուցիչների վերապատրաստման մասին է[36]:



Գծ. 2. ԿԶՆ 4-ի՝ մեծահասակների կրթությանը և ողջ կյանքի ընթացքում ուսմանը վերաբերող ցուցանիշներն ու ենթացուցանիշները:

[35] https://armstat.github.io/sdg-site-armenia/am/
[36] Նույն տեղում:

2020 թ.-ի հուլիս ամսին Հայաստանի կայուն զարգացման նպատակների ազգային կամավոր գնահատման զեկույցը մշակվել և ներկայացվել է ՄԱԿ: Զեկույցը վերաբերում է ԿԶՆ-ի առաջընթացին: Չնայած ՄՈՒԿ-ը համարվում է նպատակ 4-ի առանցքային բաղադրիչներից մեկը, զեկույցում չկա որևէ տեղեկություն ՄՈՒԿ վերաբերյալ: Ի աջակցություն Կայուն զարգացման նպատակների իրականացմանը՝ 2017 թ. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակն ու ՀՀ կառավարությունը համաձայնեցին հիմնել Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոն[37], որի առաքելություն է աջակցել փաստահեն քաղաքականության մշակմանը՝ շնորհիվ ԿԶՆ-ի իրականացմանը միտված ազգային նորարարական լուծումների: Կենտրոնի նախագծերն ուղղված են տվյալների վերլուծության արդյունքների շրջանակում մի քանի, այդ թվում՝ արհեստական բանականության (ԱԲ) միջոցով աշխատող գործիքների ստեղծմանը: Օրինակ՝ «Edu2Work» նախագիծը[38], որը մեկնարկել է 2019 թ.-ին, նպատակ ունի միավորել կրթական համակարգն ու աշխատաշուկան՝ քարտեզագրելով զբաղվածության միտումները և կանխատեսումներ անելով արհեստական բանականության միջոցով: Ակնկալվում է, որ այն հնարավորինս կնպաստի կրթության ոլորտում քաղաքականության մշակմանը, սակայն, ՄԿ-ը և ՄՈՒԿ-ը՝ որպես անկախ ենթաճյուղեր դրա սևեռումի ներքո չեն:

Եվ վերջապես, ՄՈՒԿ ոլորտի մշտադիտարկման երրորդ միջազգային ծրագիրը՝ Մեծահասակների կոմպետենցիաների գնահատման միջազգային ծրագիրը (ՄԿԳՄԾ/PIAAC), որն իրականացվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՁԿ/ OECD) կողմից, ՏՀՁԿ անդամ երկրներում գնահատում է մեծահասակների գրաճանաչությունը, թվաճանաչությունը, խնդիրներ լուծելու հմտությունը[39]: Հայաստանը, չլինելով ՏՀՁԿ անդամ, ՄԿԳՄԾ-ին չի մասնակցում:

Չնայած Հայաստանի Հանրապետության և միջազգային կազմակերպությունների վերոնշյալ նախաձեռնություններն ու փորձերը ՄՈՒԿ կարիքները բավարարելու տեսանկյունից արժեքավոր են, այնուամենայնիվ, առանց երկրի ներսում տվյալների սիստեմատիկ հավաքագրման, մշտադիտարկման և համակարգման՝ ՄՈՒԿ անկախ քաղաքականության ձևավորման համար սահմանափակ արդյունքների տրամադրման ռիսկ է առաջանում:

[37] https://www.sdglab.am/

[38] https://www.sdglab.am/en/news/news/edu2work-to-bridge-the-gap-between-labor-market-and-education

[39] https://www.oecd.org/about/document/list-oecd-member-countries.htm

Բաժին 1. Հիմնական արդյունքների ամփոփում

1. Հայաստանում խորհրդային կարգերի օրոք ՄԿ ծրագրերի իրականացման ինստիտուցիոնալ հարթակները («Գիտելիք», «ԴՕՍԱԱՖ» ընկերություններ) ներառում էին գիտության, ճարտարագիտության և ժամանցի ոլորտները: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ մեծահասակների կրթության ծրագրերը գլխավորապես ծառայում էին քաղաքական քարոզչության և կոմունիստական գաղափարախոսության կարիքներին: Անկախ Հայաստանում մեծահասակների կրթությանն առնչվող օրենսդրական առաջին դրույթներն ամրագրվեցին 1999 թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում: Հայաստանում վերջին 20 տարիներին տարբեր փաստաթղթերում կիրառվել են մեծահասակների կրթությանն առնչվող տարատեսակ եզրույթներ (օրինակ՝ ցկյանս կրթություն, հարատև կրթություն, անընդմեջ կրթություն, լրացուցիչ կրթություն, լրացուցիչ և շարունակական կրթություն, մեծահասակների կրթություն, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն), որոնք շփոթմունքի և տարընթերցումների տեղիք են տվել: 2014 թ. «Կրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով նախարարությունը գնաց ոչ թե մեծահասակների կրթության մասին առանձին օրենք ունենալու, այլ գործող օրենքներում փոփոխություններ կատարելու ճանապարհով: Արդյունքում «հարատև կրթություն» և «լրացուցիչ կրթություն» եզրույթները իրավականորեն ներմուծվել ու շրջանառության մեջ են դրվել:

2. 2010 թ.-ին ՀՀ ԿԳՆ կողմից ստեղծվեց Լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը: 2012 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ընդունեց 2013-2017 թթ. «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարությունը և գործողությունների պլանը», որին հաջորդեցին «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը»: Չնայած 2018 թ. դրությամբ վերոնշյալ ռազմավարության գործողության ժամկետը լրացել է, այն մինչ այժմ չի մշտադիտարկվել և չի փոխարինվել նոր քաղաքականությամբ: Ինչ վերաբերում է բաժնին, ապա ԿԳՄՄՆ կազմում դրա տեղն ու դերը հստակ չեն:

3. 2017 թ.-ից ի վեր պետությունը քիչ ջանք է գործադրել ռազմավարական և օրենսդրական մակարդակներում ՄՈՒԿ զարգացումների շարունակականությունն ապահովելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, 2018 թ. թավշյա հեղափոխությանը հաջորդող ժամանակահատվածում նոր Կառավարության կողմից շրջանառության մեջ են դրվել մի շարք փաստաթղթեր, որոնցից կարել է ենթադրել, որ այս բնագավառը որոշ չափով մնում է քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում: 2019 թ. փետրվար ամսին ՀՀ կառավարության կողմից ընդունված հնգամյա ծրագրում կան մի քանի դրույթներ, որոնք կարևորում են Հայաստանի

քաղաքացիների մասնագիտական հմտությունների զարգացումը, որակավորված կադրերի առկայությունը, փափուկ հմտությունները և այլն:

4. Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որոնք ունեն որակի ապահովման գործող համակարգեր՝ ներքին (ՈՆԱ) ու արտաքին (ՈԱԱ) ընթացակարգերով և հավատարմագրման ընթացակարգերով: Եվ չնայած երկիրն ունի նաև որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ), այնուամենայնիվ ոչ ֆորմալ կամ լրացուցիչ ՄՈՒԿ որակավորման համար գործառական շրջանակների ինտեգրումը այդ շրջանակի մաս չի կազմում: Չնայած Կառավարությունը մի քանի որոշում է ընդունել, որոնցում նշվում է և՛ լրացուցիչ կրթական ծրագրերի հավաստագրման, և՛ դրանց ճանաչման մասին, դրանք դեռևս ամբողջապես չեն կիրարկվել: Հայտնի խոչընդոտներից մեկն այն է, որ ՈԱՇ-ը սիստեմատիկ կերպով բարեփոխումների չի ենթարկվել՝ մատչելիության, հասանելիության, առաջընթացի ու որակավորումների ճկունության աստիճանը բարձրացնելու և մեծահասակների համար մասնագիտությունների միջև անցումն ապահովելու համար: Մեկ այլ մարտահրավեր է այն, որ Ուսուցման ազգային հիմնադրամը (ՈՒԱՀ)՝ այն գործակալությունը, որը պատասխանատու է ճանաչման և վավերականացման համար, չունի ֆինանսավորում և համապատասխան աշխատակազմ՝ ավելի մեծ պատասխանատվություն ստանձնելու համար:

5. Որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկիր՝ Հայաստանը ներառված է Մեծահասակների կրթության միջազգային կոնֆերանսներում (CONFINTEA) և Գործողությունների բելեմյան շրջանակում, սակայն չի անդամակցում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԿԶ) կողմից անցկացվող Մեծահասակների կոմպետենցիաների գնահատման միջազգային ծրագրին (ՄԿԳՄԾ/PIAAC): ԿԶՆ-ի ազգային մակարդակում իրականացման վերաբերյալ տվյալներն ու հաշվետվությունները դեռևս սահմանափակ են: ԿԶՆ 4-ի ցուցանիշներն ու ենթացուցանիշները, որոնցում նշվում է հարատև ուսումնառության և մեծահասակների կարողությունների ձևավորման մասին, որևէ վիճակագրության մեջ տեղ չեն գտել:

ԲԱԺԻՆ 2: ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

2.1 Ընդհանուր ակնարկ: Մեծահասակների կրթության հիմնական դերակատարներ

Հայաստանում մեծահասակների կրթության հիմնական չորս դերակատարներից առաջնայինը պետական հատվածն է, որին հաջորդում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ), ինչպես նաև բուհերը և զբաղվածությունը խթանող կառույցները:

Մեծահասակների կրթական ծրագրերի մեծ մասն իրականացվում է պետական կառույցների (նախարարություններ, կառավարությանը և պետությանը կից գործակալություններ) աշխատակիցների՝ հիմնականում քաղաքացիական ծառայողների մասնագիտական զարգացման համար: Այս պարագայում լրացուցիչ կրթության և՛ պատվիրատուն, և՛ ֆինանսավորողը պետությունն է: Ընդ որում՝ մեծահասակների կրթության ոլորտում պետությունը թե՛ կրթական ծառայություններից օգտվողն է, թե՛, մասամբ, կրթական ծառայություններ մատուցողը:

Մեծահասակներին կրթություն տրամադրող մյուս կարևոր դերակատարները բուհերն են, որոնց մեծ մասին ևս պետությունն է ֆինանսավորում: Մեծահասակների ուսումնառության և կրթության ոլորտի արդի ազգային ռազմավարության բացակայության պատճառով Հայաստանի բուհերի կողմից առաջարկվող լրացուցիչ կրթական ծրագրերի մեծ մասը նախատեսված է սահմանափակ՝ ներքին թիրախային խմբերի՝ իրենց աշխատակիցների և շրջանավարտների համար:

ՄԿ ոլորտի երրորդ շարժիչ ուժը քաղաքացիական հասարակության կազմակերպություններն (ՔՀԿ) ու հասարակական կազմակերպություններն են: Կրթական գործընթացն այս ոլորտում հնարավորինս ճկուն է և պակաս ֆորմալացված՝ ի տարբերություն վերոնշյալ դերակատարների: Ֆինանսավորման աղբյուրները, հիմնականում, միջազգային կազմակերպություններն են:

Եվ վերջապես, ՄԿՈՒ են առաջարկում նաև ***գործատուներն*** իրենց անձնակազմին, որի նպատակն իրենց իսկ աշխատակիցների որակավորումների բարձրացումն է կամ նրանց միանգամայն նոր մասնագիտացումների յուրացումը: Գործատուները ևս ճկուն են՝ իրենց աշխատակիցների կարիքները գնահատելու, ՄԿ դասընթացների բովանդակությունը/ծրագիրը որոշելու և դրանց մատուցման ձևի հարցերում:

2.2 ՄԿ ծառայություններ ՀՀ հանրային կառավարման մարմինների կամ նրանց՝ կրթական նպատակով ստեղծած կազմակերպությունների կողմից

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ «Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով: Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար»[40]: Աշխատանքային կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է Քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը: Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից: Վերապատրաստում անց է կացվում նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում[41]: Համապատասխան պետական մարմնի (օրինակ՝ նախարարության) գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է այդ մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները և վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուները: Այնուհետև այդ ծրագիրը ներկայացվում է Քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման: Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս համաձայնություն՝ այն հաստատելու համար: Վերապատրաստումն անցնելուց հետո քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Նա պետք է հավաքի անհատական ծրագրով հաստատված կրեդիտները, որպեսզի համարվի վերապատրաստված:

Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: 2020 թ. պետական

[40] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=138910

[41] Երբ քաղաքացիական ծառայության նոր խնդիրներ են առաջ քաշվում, օրինակ՝ օրենսդրական փոփոխություններ, նոր քաղաքականությունների կամ ռազմավարությունների ընդունում և այլն:

բյուջեում մոտ 158 միլիարդ դրամ (276 միլիոն եվրո) է հատկացվել կրթության ոլորտին, որից շուրջ 5 միլիարդ 418 միլիոն դրամը (9.472 միլիոն եվրո)՝ կրթության բյուջեի մոտ 3.4%-ը, «Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության»-ը: Այս գումարի գերակշիռ մասը (4 միլիարդ 212 միլիոն դրամ՝ 7.363 միլիոն եվրո) ուղղվում է «Արտադպրոցական դաստիարակության» ծրագրերին, որոնց հիմնական շահառուն երեխաներն են և պատանիները: Միջոցներ են ուղղվում իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական ծրագրերի իրականացմանը, շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, երաժշտական և արվեստի դպրոցների գործունեությանն աջակցելուն և այլն:



Գծ. 3. Վերապատրաստման ծախսերը ՀՀ կառավարության 2020 թ. բյուջեում

Միևնույն ժամանակ «լրացուցիչ կրթության» ոլորտին հատկացվում է ընդամենը 1 միլիարդ 204 միլիոն դրամ (2.105 միլիոն եվրո)՝ «վերապատրաստման ծառայություններ» (374 միլիոն դրամ) մատուցելու համար մեծահասակ շահառուների մի հատվածին՝ պետական տարբեր հաստատությունների (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ քննչական մարմիններ, ՀՀ արդարադատության նախարարություն և մի շարք այլ պետական գործակալություններ) աշխատակիցներին և այլ առանձին խմբերին կամ պետական մարմիններին: Օրինակ՝ զգալի գումար (մոտ 313 միլիոն դրամ՝ 547 հազար եվրո) է հատկացվել ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստմանն ու հատուկ ուսուցմանը: Երրորդ ամենամեծ ծախսը (մոտ 135 միլիոն դրամ՝ 236 հազար եվրո) ուղղվել է հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման կարիքներին և այսպես շարունակ[42]:

[42] Ինտերակտիվ բյուջե 2020, https://www.e-gov.am/interactive-budget/

Եթե ուսումնասիրենք պետական բյուջեում լրացուցիչ և շարունակական կրթությանն ուղղված հատկացումները ժամանակագրորեն՝ համապատասխանաբար 2019, 2018 (թավշյա հեղափոխության պատճառով բաց թողնված տարի), 2017 և 2016 թվականների համար, ապա թվերը կվկայեն լրացուցիչ կրթության պետական ֆինանսավորման կրճատման մասին:



Գծ.4. Պետական բյուջեի հատկացումները ԼՃԿ ոլորտին (աղբյուր՝ ինտերակտիվ բյուջեներ 2019, 2017, 2016)

Քաղաքացիական ծառայողների և պետական կառույցների այլ աշխատողների համար կրթական ծրագրեր իրականացնում են ինչպես ՀՀ պետական կառավարման մարմինները, այնպես էլ հատուկ այդ նպատակով ստեղծված պետական կազմակերպությունները: Հավելված 2-ում կարելի է տեսնել այդ կառույցների ոչ ամբողջական ցանկը: Չնայած վերը նշված թերություններին՝ հարկ է ցույց տալ նաև լավագույն օրինակները: Դրանցից մեկը ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ն է, որի գործունեությունն ու ձեռքբերումները հակիրճ ներկայացված են ստորև՝ որպես լավագույն օրինակ:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը[43] պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի խնդիրներն են՝ ՀՀ քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայողների վերապատրաստման ու հատուկ ուսուցման դասընթացների կազմակերպումը, **սոցիալական վերականգնման (այդ թվում՝ կրթական) ծրագրերի իրականացումը քրեակատարողական հիմնարկներում պահվող կամ ազատությունից զրկման հետ չկապված պատիժ կրող կամ վերահսկողության տակ գտնվող**, ինչպես նաև պատժից ազատված անձանց համար և այլն:

2018 թ. իրականացված աշխատանքների հաշվետվության համաձայն՝ Կենտրոնն անցկացրել է՝

- 540 քրեակատարողական ծառայողի, 60 հարկադիր կատարողի, հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման 32 պատասխանատուի, քրեակատարողական ծառայության 102 բուժանձնակազմի վերապատրաստում,
- 1823 քրեակատարողական ծառայողների և 30 հարկադիր կատարողի հատուկ ուսուցում,
- գեղագիտական դաստիարակության և կրթության դասընթացներ 121 կալանավորված և/կամ դատապարտված անձանց համար:

2019 թ.-ից Կենտրոնը մեկնարկել է նաև ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված մինչև 19 տարեկան անձանց հանրակրթության կազմակերպումը, որը ֆինանսավորում է ՀՀ կառավարությունը: Կենտրոնն ակտիվ համագործակցում է նաև միջազգային կազմակերպությունների հետ (ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանություն, PH International-ի հայաստանյան գրասենյակ և այլն) ՝ իրականացնելով ռիսկային և խոցելի խմբերին պատկանող մեծահասակների, այդ խմբերի հետ աշխատող մասնագետների (քննիչներ, համայնքային ոստիկաններ, համայնքային սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, պրոբացիոն ծառայողներ) համար բազմաթիվ այլ լրացուցիչ կրթական ծրագրեր:

[43] https://lawinstitute.am/2018/; https://www.moj.am/structures/view/structure/24

2.3 ՄԿ ծառայություններ բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) և ՔՀԿ-ների կողմից

2004 թ.-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը բուհերի համար չի սահմանում պարտադիր պահանջ՝ իրականացնելու լրացուցիչ կրթական ծրագրեր: Մասնավորապես՝ 6-րդ հոդվածի («Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները») 5-րդ կետում նշված է, որ «...բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումները կարող են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև **լրացուցիչ կրթության ծրագրեր**»:[44] Վերոնշյալ ձևակերպումը վկայում է այն մասին, որ բուհի՝ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման իրավասությունը հայեցողական բնույթ է կրում:
2019 թ. դեկտեմբերին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում[45] հրապարակվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը[46]: 2020 թ. սեպտեմբերին այն ներկայացվել է ՀՀ կառավարությանը: Այս կարևոր փաստաթղթում առանցքային տեղ է գրավում «բարձրագույն կրթության շարունակականությունը» որպես գերակայություն ներկայացնելը (Հոդված 4, 1-ին կետի 6-րդ ենթակետ) :
Ավելին, Հոդված 5-ի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բուհի հիմնական գործառույթների շարքում առանձնահատուկ կարևորություն է տրվում նաև կրթական գործընթացի շարունակականության ապահովմանը: Այնուամենայնիվ, օրենքի նախագիծը չի ներառում ուղղակի հղումներ ՀՈՒ կամ ԼԾԿ ծրագրերին:

Բուհերի կողմից լրացուցիչ կրթության կազմակերպման միասնական մոդել գոյություն չունի: Որոշ բուհեր, օրինակ, լրացուցիչ կրթություն են իրականացնում իրենց՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների միջոցով: Դրանք ուսանողներին հնարավորություն են տալիս հիմնական մասնագիտական ծրագրերին զուգահեռ մասնակցել մեկ այլ որակավորում ենթադրող երկամյա ծրագրի՝ ձեռք բերելով մասնագիտական երկու որակավորում: Կան բուհեր, որտեղ լրացուցիչ կրթության առավել ակտիվ դերակատարը բուհի կառուցվածքային ստորաբաժանումն է: Այդպիսի օրինակ է Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը կամ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնը: Վերջապես, համալսարանական լրացուցիչ կրթություն կարող է իրականացվել նաև հատուկ այդ նպատակով ստեղծված ուսումնական կենտրոնի միջոցով (ինչպես Ամերիկյան համալսարանի կամ Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դեպքում): Բուհերը ևս, ինչպես վերոնշյալ պետական կառույցները, առաջարկում են լրացուցիչ կրթական

[44] «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820
[45] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/
[46] https://www.e-draft.am/projects/2164

ծրագրեր այն քաղաքացիական ծառայողների, ակադեմիական անձնակազմի և պետական այլ աշխատողների համար, որոնք փնտրում են վերապատրաստման, ինչպես նաև մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորություն: Հավելված 2-ում ներառված է ՀՀ-ում լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցող բուհերի ոչ ամբողջական ցանկը:

Բուհերի կողմից իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները տարբեր են՝ կախված պատվիրատուից և ծառայություն ստացողից: Եթե պատվիրատուի դերում հանդես է գալիս պետությունը (օրինակ՝ ԵՊՀ-ին կամ Կառավարման ակադեմիային պատվիրում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստում), ապա ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներով: Այլ դեպքերում ֆինանսավորման հարցն ունի կոնկրետ իրավիճակային լուծում: Օրինակ՝ բուհերի դասախոսների պարտադիր վերապատրաստումներն իրականացվում են հենց բուհի միջոցների հաշվին և դասախոսների համար անվճար են: Այս դեպքում բուհը՝ որպես գործատու, մտահոգված է իր աշխատողների որակավորման բարձրացմամբ և հենց ինքն էլ լուծում է այդ խնդիրը՝ ներքին ռեսուրսների միջոցով:

Հայաստանի ամերիկյան համալսարանն ունի ընդօրինակելի կրթական պրակտիկա, որի շնորհիվ էլ առանձնանում է մյուս բուհերից: Ստորև, որպես լավագույն օրինակ, ներկայացվում է ՀԱՀ-ի բաց կրթության հարթակը/AUA Open Education:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Բաց կրթության հարթակ (AUA Open Education)[47]: ՀԱՀ-ը միջազգային համալսարան է՝ ամերիկյան հավատարմագրման և որակի չափանիշներով: ՀԱՀ-ի բաց կրթությունը ծառայում է որպես հիմնական կապի հարթակ համալսարանի և համայնքի միջև: Այն գործում է ՀՈՒ արևմտյան մոդելի հիման վրա՝ առաջարկելով ինչպես վճարովի, այնպես էլ անվճար ուսուցման ծառայություններ՝ շարունակելով խոցելի տարածաշրջաններին և խմբերին հնարավորություններ ընձեռելու իր բարի ավանդույթը: Ինչպես նշվում է համալսարանի կայքում՝ «մեր տեսլականն է՝ դառնալ վերապատրաստում իրականացնող հիմնական կազմակերպություն՝ շարունակական կրթության, մեծահասակների ուսուցման և հարատև ուսումնառության մեջ լավագույնը փնտրողների փոփոխվող կարիքները բավարարելու համար»: ՀԱՀ-ի բաց կրթության հարթակի միջոցով պլանավորվում, նախագծվում, մշակվում և իրականացվում են մի շարք դասընթացներ հանրային և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ինչպես նաև ավելի լայն իմաստով անհատների կարիքները բավարարելու համար: Նպատակն է օգնել նրանց՝ հասնելու իրենց մասնագիտական ձգտումներին՝ մեծահասակների և շարունակական կրթության ճկուն և նորարարական ծրագրերի, այդ թվում՝ վերապատրաստումների, աշխատաժողովների և սեմինարների միջոցով:

[47] https://openeducation.aua.am/

ՀԱՀ-ի բաց կրթության հարթակն առաջարկում է ընդհանուր անգլերենի դասընթաց, համակարգչային գրագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների, առաջնորդության, բիզնես կառավարման և ձեռներեցության մի շարք դասընթացներ, որոնց ավարտին տրվում են հավաստագրեր: Բացի Երևանի հիմնական մասնաճյուղից՝ Գյումրիում, Դիլիջանում, Եղեգնաձորում, Վանաձորում և Ստեփանակերտում (Արցախի Հանրապետություն) գործող հինգ գրասենյակ առաջարկում են ՀՈՒ դասընթացներ նաև շրջանային մակարդակում[48]:

ՄՈՒԿ/ՀՈՒ ոլորտում գործող ՔՀԿ-ների շարքում ակտիվ դերակատարներ են ՀԿ-ները, որոնք պարբերաբար առաջարկում են քաղաքացիական կրթության հնարավորություններ՝ կարճաժամկետ համաժողովների, աշխատաժողովների ու դասընթացների ձևաչափով: Առաջարկվող թեմաները հիմնականում վերաբերում են մարդու իրավունքներին, կոռուպցիայի դեմ պայքարին, ժողովրդավարությանը, քաղաքացիական ակտիվիզմին և դրա գործիքակազմին, հետաքննական լրագրությանը, մեդիագրագիտությանը և այլն: Մեծահասակների կրթության այս տեսակն ավելի շատ թիրախավորում է քաղաքացիական և հանրային ակտիվություն դրսևորող անհատներին ու խմբերին, ինչը որոշակիորեն նեղացնում է դրա ազդեցության շրջանակը: Այս կերպ ՔՀԿ-ներն ապահովում են իրենց իսկ գործունեության շարունակականությունը և նոր կադրերի ներհոսքը արդեն իսկ գործող հանրային կառույցներ: Նրանք նաև խթանում են նոր նախաձեռնությունների ու կազմակերպությունների ձևավորումը՝ նրանց հնարավորություններ ընձեռելու շնորհիվ:

Դասընթացների հնարավորությունների բազմազանության մեջ ՄՈՒԿ ոլորտի դասընթացները՝ միտված զբաղվածությունը (օրինակ՝ աշխատանք փնտրողների փափուկ հմտությունների զարգացման միջոցով) կամ (սոցիալական) ձեռներեցությունը խթանելուն, հիմնականում անվճար են: Ավելին՝ շատ հաճախ մասնակիցները ստանում են դրամաշնորհներ կազմակերպիչների կողմից, որպեսզի պլանավորեն և իրականացնեն սեփական ծրագրերը՝ գործնականում կիրառելով նոր ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտում այս տեսակի ծրագրերի ֆինանսավորման աղբյուրը միջազգային դոնորներն են, քանի որ պետական բյուջեն նման ծրագրերի համար հատկացումներ չի նախատեսում:

Հայաստանում լրացուցիչ կրթական ծրագրեր ֆինանսավորող կամ դրանց իրականացմանն աջակցող առավել ակտիվ միջազգային կառույցներ են Եվրոպական միությունը(ԵՄ), ՄԱԿ-ի գործակալությունները, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Համաշխարհային բանկը և մյուսները: Այդ կառույցների կողմից ֆինանսավորվող գրեթե բոլոր ծրագրերում ներառված է կարողությունների զարգացման բաղադրիչ, որը ենթադրում է վերապատրաստումներ և իրազեկվածության բարձրացմանը միտված դասընթացներ տարբեր թեմաներով և բնագավառներում: Կան նաև մասնավոր դոնորների կողմից աջակցվող ՔՀԿ-ներ և/կամ

[48] https://openeducation.aua.am/regional-offices/

հիմնադրամներ, որոնք իրականացնում են վերապատրաստման դասընթացներ (երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար) մեդիագրագիտության, ֆինանսական գրագիտության, ձեռներեցության և այլնի վերաբերյալ: Այս կառույցների և ոչ ամբողջական ցանկը տե՛ս Հավելված 2-ում:

Հայաստանում ՄՈՒԿ ոլորտին աջակցող միջազգային կազմակերպությունների շարքում հատուկ առաքելություն ունի **Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը՝ Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի հայաստանյան գրասենյակը**[49]: Այն ավելի քան 50 տարի աջակցում է մեծահասակների ուսումնառության ու կրթության, ինչպես նաև հարատև ուսումնառության ոլորտի զարգացմանը՝ ամբողջ աշխարհում երիտասարդների և մեծահասակների կրթության կայուն կառույցներ ստեղծելու միջոցով: Հիմնադրված լինելով 2002 թ.-ին՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը բազմաթիվ հնարավորություններ է ընձեռել Հայաստանում ՄՈՒԿ և ՀՈՒ քաղաքականության մշակման և պրակտիկայի համար: Կազմակերպության գործունեության շրջանակը ներառում է մեծահասակների կրթության ջատագովություն, լոբբինգ և ՄԿ մասնագետների կարողությունների զարգացում, աջակցություն մեծահասակների կրթության ասոցիացիաներին, ինչպես նաև համայնքային մասնագիտացված կենտրոնների միջոցով խոցելի խմբերին ՄՈՒԿ ծառայությունների մատուցում: Դի-Վի-Վի-ի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության մարզերում հիմնվել է մեծահասակների կրթության երեք կենտրոն (երրորդը հիմնվել է 2019 թ.-ին)[50]: Նրանց առաքելությունն է տեղի խոցելի բնակչությանն ապահովել մասնագիտական և փափուկ հմտություններով՝ աշխատաշուկայում նրանց մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Այս կենտրոնները տարեկան վերապատրաստում են առնվազն 300 շահառուի՝ առաջարկելով ավելի քան 20 դասընթաց՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Ստորև ներկայացված է դրանցից մեկը՝ ***Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնը՝ որպես լավագույն օրինակ***[51]*:*

Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը 2012թ. -ին Հայաստանի հարավային շրջանի համայնքապետարանների համար մեծահասակների նոր կրթական կենտրոն հիմնելու մրցույթ հայտարարեց: Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կողմից առաջարկված ծրագրերից լավագույնը ճանաչվեց Սիսիանի քաղաքապետարանի ներկայացրած ծրագիրը: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և Սիսիանի քաղաքապետարանի միջև ստորագրված 2013 թ.-ի հուշագիրը դարձավ հաջող գործակցության առաջին քայլը, որը հաջորդ 7 տարիների ընթացքում վերաճեց կայուն համագործակցության:

[49] https://www.dvv-international.de/en/worldwide/europe/caucasus-and-turkey/armenia

[50]Ներառյալ «Խաչմերուկ» մեծահասակների կրթության կենտրոնը Շիրակի մարզում (համագործակցությունը՝ 2007 թ.-ից), Սիսիանի ՄԿԿ-ը (2014 թ.) և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը (2019 թ.)

[51] https://sisianaec.am/, Սիսիանի մեծահասակաների կրթության կենտրոն

Սիսիանի քաղաքապետարանի տրամադրած մեծահասակների կրթության կենտրոնի տարածքը 2013 թ.-ին վերանորոգվեց և կահավորվեց Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ֆինանսական աջակցությամբ, այնուհետև Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնը գրանցվեց որպես հիմնադրամ, որին տրամադրվեց ֆինանսական օժանդակություն՝ բարելավելու ենթակառուցվածքներն ու հարմարությունները, ինչպես նաև գործելու որպես հիմնադրամ: 2014 թ.-ից ի վեր կենտրոնն առաջարկում է ծառայություններ՝ ուղղված մարդկանց գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը: Այն դարձել է կապող օղակ գործատուների և աշխատանք փնտրողների միջև, ընդ որում՝ դառնալով աշխատաշուկայում արդյունավետ հաղորդակցության և համագործակցության երաշխավորը: Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնի դասընթացների ընտրությունը հիմնված է մասնագիտացումների պահանջարկի վրա՝ ըստ շահառուների և գործատուների կարիքների գնահատման (հարցումների):
2014-2019 թվականներին Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնը առաջարկել է ավելի քան 20 տարատեսակ դասընթացներ 115 խմբերի համար: Ընդհանուր առմամբ այդ դասընթացներին մասնակցել է 905 շահառու, որոնցից միայն 20.1%-ը՝ տղամարդ, 79.9%-ը՝ կին: Տվյալ ժամանակահատվածում մասնակիցների 39%-ը գործազուրկ էր, 42%-ը՝ աշխատող, իսկ 19%-ը՝ ուսանող: Ամենամեծ պահանջարկն են վայելում համակարգչային գրագիտության և անգլերենի դասընթացները: Դասընթացները մատչելի են համայնքի համար. տարեկան անդամավճարը կազմում է 8000 ՀՀ դրամ (20 եվրոյից պակաս): Այս քաղաքականությամբ նրանք ապահովում են ՄՈՒԿ ծրագրերի հասանելիությունը և ողջ տարվա ընթացքում կայուն մասնակցության հնարավորությունը համայնքի բնակչության համար: Իր գործունեության շրջանակն ընդլայնելու համար կենտրոնը համագործակցում է նաև տարբեր գործընկերների հետ՝ աշխատելով բարելավել Սիսիանում մասնագիտական կրթության և ուսուցման համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին: Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնը անդամակցում է «Սոցիալական գործընկերություն և կրթություն. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» կոնսորցիումին, որը հիմնվել է ԵՄ-ի կողմից: Կենտրոնն իրականացնում է նաև տեղական ժողովրդավարության, արդյունավետ կառավարման, հանրային կառավարման և համայնքային զարգացման նախագծեր, որոնցից մեկը, որը հովանավորվում է ԱՄՆ դեսպանատան կողմից, նպատակ ունի Սիսիան համայնքին ներկայացնելու մասնակցային բյուջետավորման և կառավարման նոր գործիքակազմը:

Հայաստանում մասնավոր հատվածը ևս ՄՈՒԿ/ՀՈՒ ոլորտի դերակատար է՝ կարճաժամկետ ուսուցողական կամ վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով, որոնց համար, հիմնականում, առկա չէ որևէ տարիքային սահմանափակում: Այս ծրագրերը հիմնվում են շուկայական պահանջարկի վրա և մեծապես հաշվի են առնում գործատուների՝ մասնագիտական վերաորակավորման և հմտությունների զարգացման պահանջները: Առավել մեծ պահանջարկ են վայելում օտար լեզուների, SS

և ծրագրավորման, հաշվապահության, հյուրընկալության և ֆինանսական գրագիտության՝ վճարովի հիմունքներով դասընթացները: Մասնավոր հատվածում գործող կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների գները, որակով պայմանավորված, տարբեր են՝ միջինից մինչև բարձր:

Խոհարարական արվեստի և հյուրընկալության Երեմյան ակադեմիան[52] ուսումնական կենտրոն է՝ հիմնադրված 2019 թ.-ին Հայաստանի ռեստորանային բիզնեսի ամենահայտնի սեփականատերերից մեկի կողմից: Ակադեմիան առաջարկում է խոհարարների վերապատրաստման մասնագիտական դասընթացներ՝ ձգտելով ոլորտն ապահովել խոհարարներով, մատուցողներով և ռեստորանների մենեջերներով: Ակադեմիան կազմակերպում է վարպետության դասեր նաև հասարակության ավելի լայն շերտերի համար: 2019 թ.-ին առաջին ընդունելության համար փորձնակ խոհարար դառնալու կամ հյուրընկալության այլ ոլորտի մասնագիտացում ձեռք բերելու ուղղությամբ հետաքրքրված անձանց կողմից ներկայացվել է շուրջ 300 դիմում: Երեմյան ակադեմիայի դասընթացները հավատարմագրվում են Միացյալ Թագավորությունների Օքսֆորդի քաղաքային քոլեջի (City of Oxford College, UK) կողմից, իսկ վկայականները կրում են գերազանցության դրոշմներ: Շրջանավարտներին շնորհվում են Օքսֆորդի քաղաքային քոլեջի և ակադեմիայի համատեղ ավարտական վկայականներ (դիպլոմներ): ՈԱ և հավատարմագրման ընթացակարգերը ամբողջովին վստահված են քոլեջին, քանի որ ակադեմիան հավակնում է այս ոլորտում դառնալ առաջատարը տարածաշրջանում: 2020 թ.-ի հոկտեմբերից սկսած՝ ակադեմիան առաջարկում է նաև «Խոհարարական արվեստ» խորագրով ծրագիր, որը դասավանդվում է միայն անգլերենով:

Բացի մասնագիտական՝ այսպես կոչված «կոշտ» ուղղվածության դասընթացներից՝ մասնավոր հատվածում կան նաև «փափուկ» հմտությունների զարգացմանը (մասնագիտական և անհատական աճին) միտված լրացուցիչ կրթական ծրագրեր: Այս ծրագրերն օգնում են զարգացնել հաղորդակցության և ինքնաներկայացման, անձնային աճի և ինքնակրթության հմտությունները, զարգացնել բազմամշակութային, միջոլորտային կոմպետենցիաներ:

[52] http://www.yeremyan.academy/

2.4 Աշխատողների և աշխատանք փնտրողների լրացուցիչ կրթություն

ՀՀ աշխատանքային օրենսգրքի աշխատաժամանակի կառուցվածքում ներառված է աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում որակավորման բարձրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Աշխատակիցներին տրամադրվում է ուսումնական արձակուրդ քննություններին, ստուգարքներին, ավարտական աշխատանքներին, լաբորատոր աշխատանքներին պատրաստվելու համար: Ընդ որում՝ աշխատակիցը ուսումնական արձակուրդի համար վճարվում է, եթե գործատուն է նրան գործուղել սովորելու: Անձնական նախաձեռնությամբ ԼՇԿ/ՄՈՒԿ դասընթացներին մասնակցելու դեպքում վճարման հարցը թողնված է կողմերի համաձայնությանը: Գործատուն իրավունք ունի կազմակերպելու ուսանող-պրակտիկանտների կամ հավանական թեկնածուների մասնագիտական ուսուցում մինչև 6 ամիս տևողությամբ: Ուսուցման ընթացքում նրանք պարտավոր են վճարել ուսումնառուին՝ առնվազն օրենքով սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի չափով: Կազմակերպության լուծարման կամ արտադրական ծավալների կրճատման ժամանակ աշխատողի՝ իր պաշտոնին անհամապատասխանության դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցում ստացած աշխատողները կարող են ուղարկվել վերապատրաստման՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտության ձեռքբերման կամ որակավորման բարձրացման համար: ՀՀ աշխատանքային օրենսգրքում մասնագիտական կրթությունը դիտարկվում է որպես մարդու իրավունք: 2013 թ.-ին ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի[53] համաձայն՝ գործազուրկ անձն ունի մասնագիտական կողմնորոշման, մասնագիտական ուսուցման իրավունք: Մասնագիտական ուսուցման ընթացքում նա ստանում է կրթաթոշակ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալությունը[54] (այսուհետ՝ Գործակալություն) նախարարության առանձին ստորաբաժանում է, որն աջակցում է աշխատանք փնտրողներին աշխատանքի տեղավորման հարցում, իսկ գործատուներին՝ համապատասխան աշխատանքային որակավորումներ ունեցող մասնագետներ գտնելու հարցում: Գործակալությունն ունի 51 տարածքային կենտրոն ողջ հանրապետությունում, որոնցից 10-ը գործում են Երևանում, իսկ 41-ը՝ հանրապետության մարզերում: Գործակալության կողմից մատուցվող բոլոր ծառայություններն անվճար են: 16 տարին լրացած ցանկացած անձ կարող է դիմել գործակալության տարածքային կենտրոն՝ որպես աշխատանք փնտրող հաշվառվելու և տարածքային կենտրոնի ծառայություններից օգտվելու նպատակով: Գործակալության մշակած «Աշխատանք փնտրողների համար զբաղվածության պետական աջակցության հնարավորությունների մասին» ուղեցույցի միջոցով կատարվում է աշխատանք փնտրող անձի աշխատանքային կարիքների գնահատում, որի հիման վրա տարածքային կենտրոնի մասնագետը համեմատում է տվյալ անձի պրոֆիլը այն

[53] «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87734
[54] https://employment.am/am/index.html

ոլորտին և պաշտոնին, որի համար նա դիմում է: Հաշվի են առնվում նաև առկա թափուր աշխատատեղերը և համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին: Կազմվում է աշխատանք փնտրող անձի անհատական ծրագիրը՝ վերջինիս անհատական տվյալների, զբաղվածության պատմության, գնահատված կարիքների, առաջարկվող և իրականացվող միջոցառումների հիման վրա:

Մասնագիտական ուսուցման դասընթացները (վերամասնագիտացում, մասնագիտական որակավորման բարձրացում, նախնական մասնագիտական և արհեստագործական ուսուցում) կազմակերպվում են գործազուրկների, ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև 6 ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող առանձին կատեգորիայի անձանց համար՝ մինչև 5 ամիս տևողությամբ: Նպատակն է՝ աջակցել ձեռք բերելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ՝ աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում»: Նպատակն է խթանել ձեռներեցությունն ու օգնել մասնակիցներին ձեռք բերելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ՝ աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար: Մասնագիտական ուսուցում կազմակերպվում է, երբ.

- աշխատաշուկայում բացակայում է վերապատրաստվողի մասնագիտական կրթությանը համապատասխան հարմար աշխատանքը,
- վերապատրաստվողի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին,
- վերապատրաստվողը չունի մասնագիտական կրթություն և որակավորում[55]:

Մասնագիտական ուսուցումը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Գործակալության ամսական հաշվետվություններում[56] արտացոլված են «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման» ծրագրի մասնակիցների թիվը:

[55] https://employment.am/am/28/free.html

[56] Հաշվետվություններ, https://employment.am/am/report.html



Գծ. 5 Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման» ծրագրի մասնակիցների թիվը

Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ առկա է մասնակիցների թվի նվազման միտում, սակայն 2017 թ.-ի զեկույցի՝ հանրությանը հասանելի տվյալների բացակայությունը խոչընդոտում է ընդհանուր պատկերի լիրաժեք ներկայացմանը: Բացի այդ՝ հաշվետվությունների ձևաչափը թույլ չի տալիս մեզ հասկանալ՝ արդյոք ապահովվել է տարեկան պլանավորված մասնակիցների թիվը, թե ոչ:

Մեծահասակների կրթության մյուս տարածված եղանակը հենց գործատուի կողմից իր աշխատողներին կամ աշխատանքի համար դիմած թեկնածուներին առաջարկվող մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման կրթական ծրագրերն են: Քանի որ գործատուները թերահավատ են համալսարանական կրթության՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու հարցում, նրանցից ոմանք (օրինակ՝ SS ոլորտը) իրենք են արդեն ներդրումներ կատարում իրենց անձնակազմի շարունակական վերապատրաստման գործում: Նրանք կարևորում են աշխատակազմի ընդհանուր գրագիտությունը և բարեկրթությունը, բայց նաև պնդում են, որ ներկայումս բարձրագույն կրթությունը չի ապահովում աշխատաշուկա մուտք գործելու պատրաստի որակավորված մասնագետներ: Ավելին, խոշոր և միջին ընկերություններից շատերը կազմակերպում են աշխատանքի հավակնող (թեկնածու) անձանց ուսուցումը հենց աշխատանքի ընթացքում: Իրենց աշխատողներին կամ թեկնածուներին լրացուցիչ կրթական ծրագրեր առաջարկող առավել ակտիվ գործատուներից են օրինակ «Սինոփսիս Արմենիա»-ն, «ՎԵՈՆ Արմենիա»-ն (Beeline ապրանքանիշ), «Երեմյան փրոջեքթս»-ը և այլն: Որոշները վերապատրաստման մեջ կատարված ներդրումները համարում են երկրորդային՝ այդպիսով սահմանափակելով ՄՈՒԿ ծրագրերին մեծահասակների մասնակցությունը և դրանց հասանելիությունը:

Սոցիալական խոցելի խմբերը վերապատրաստման վերոնշյալ ծրագրերի որոշ մասը, հատկապես՝ պետության կողմից առաջարկվողները, հիմնականում համարում են անարդյունավետ, անհարկի բարդացված և բյուրոկրատացված:

Օրինակ՝ մասնագիտական ուսուցման ծրագրի շրջանակներում որևէ դասընթացի մասնակցելու համար գրանցված անձինք հնարավոր է սպասեն մինչև մեկ տարի: Այդ ողջ ժամանակահատվածում նրանք պետք է հաշվառված մնան Զբաղվածության տարածքային կենտրոնում՝ որպես գործազուրկ: Եթե այդ կարգավիճակը չեղարկվում է, ապա նրանք ինքնըստինքյան դուրս են մնում վերապատրաստման ծրագրերից:

ՄՈՒԿ և ՀՈՒ ազգային ՈԱ չափանիշների և մեխանիզմների բացակայության պատճառով տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող ՄՈՒԿ ծրագրերի զգալի մասում կիրառվում են ՈՆԱ ընթացակարգեր, ինչպիսիք են նախաթեստերն ու հետթեստերը (pre/post tests), ամփոփիչ հարցումները և մասնակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումները:

Սա ՈԱ նկատմամբ մեկ այլ՝ ոչ համակարգային մոտեցում է, որը դանդաղեցնում է ՀՀ-ում ՄՈՒԿ ոլորտի ինստիտուցիոնալացումն ու կանոնակարգումը: Այնուամենայնիվ, այն նպաստում է ՄՈՒԿ ոլորտի պրոֆեսիոնալիզացմանը՝ բարձրացնելով ՄՈՒԿ-ի տեսանելիությունը, հեղինակությունը և դրա նկատմամբ վստահությունը:

2.5 ՄՈՒԿ ոլորտին առնչվող տվյալներ և վիճակագրություն

Ընդհանուր առմամբ Հայաստանում մեծահասակների կրթության վերաբերյալ թե՛ վիճակագրական, թե՛ որակական տվյալների հավաքագրման ինստիտուցիոնալ մեխանիզմներ չկան: Չնայած ԼԾԿ 2013-2017 թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների մեջ ներառված էր ԼԾԿ իրականացման հաշվետվողական (մասնավորապես՝ մշտադիտարկման և վիճակագրական տվյալների հավաքման) համակարգի ներդնումը, այն դեռևս չի իրագործվել: Փոխարենը գոյություն ունի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ[57], որը կառավարվում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից և բաղկացած է նախադպրոցական, դպրոցական, մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտի ենթակառուցվածքների էլեկտրոնային կառավարման 3 ենթահամակարգերից: Ցավոք այս մետահամակարգը բացառում է լրացուցիչ և շարունակական կրթության և մեծահասակների կրթության վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու մշակումը:
ՀՀ ՎԿ-ն «Աշխատուժի հետազոտության» (Labor Force Survey) շրջանակներում հրապարակում է նաև անվանազերծված միկրոտվյալների բազա՝ տնային տնտեսությունների հարցման հիման վրա: Հարցաթերթի հարցերից մեկը վերաբերում է կանոնավոր կամ մեկանգամյա՝ թեկուզ մի քանի ժամ կամ օր տևողությամբ որևէ ուսուցման, պրակտիկայի, մասնավոր դասերի և մասնագիտական/վերապատրաստման դասընթացի:

Չնայած ոլորտի վերաբերյալ տվյալների բացակայությանը՝ ՀՀ ՎԿ-ի կողմից հավաքագրված վիճակագրական որոշ տվյալներ առնչվում են մեծահասակների կրթությանը: Նախ, 10 տարին մեկ անցկացվող մարդահամարում առկա են տվյալներ մեծահասակների կրթության և գրաճանաչության վերաբերյալ: Վերջին մարդահամարը Հայաստանում անց է կացվել 2011 թ.-ին, որի ամբողջական արդյունքները հրապարակվել են 2013 թ.-ին: Մարդահամարի բաժիններից մեկը վերաբերում է Հայաստանի բնակչության կրթական մակարդակին:

2011 թ. տվյալներով՝ Հայաստանում գրաճանաչ չէ 20-ից բարձր տարիքի 5.656 մարդ: Նրանցից 3.336-ը (58,9%) 65 տարեկանից բարձր են, 3898-ը (68,9%) կանայք են, ընդ որում՝ ոչ գրաճանաչ մեծահասակների 68.6%-ը (3881) ապրում է գյուղերում: 13.160 մեծահասակ չունի տարրական կրթություն: Նրանցից 9.595-ը 50 տարեկանից բարձր են: 8.448-ը կանայք են, նրանցից 7.844-ն ապրում է գյուղում[58]:

ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը 2005 թ.-ի որոշմամբ[59] հաստատել է «Աշխատողների մասնագիտական ուսուցման մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևը: Այս փաստաթղթի համաձայն՝ գործատուները պարտավոր են Վիճակագրական կոմիտեին ներկայացնել տարեկան հաշվետվություն մասնագիտական վերապատրաստում անցած աշխատողների մասին, ինչպես նաև

[57] https://emis.am/
[58] ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքներ, https://armstat.am/file/article/3._bajin_3_329-364.pdf
[59] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=22560

տեղեկություն, թե որտեղ է կազմակերպվել նրանց մասնագիտական ուսուցումը (օրինակ՝ անմիջապես կազմակերպությունում, ուսումնական հաստատությունում և այլն) և որքան են կազմել վերջինիս ծախսերը: Այս հաշվետվությունը լրացվում է միայն այն աշխատողների համար, ովքեր մասնագիտական ուսուցումն անցել են կազմակերպության (գործատուի) միջոցների հաշվին: Դա նշանակում է, որ ՎԿ-ն չի հավաքագրում տվյալներ աշխատողի՝ սեփական կամ այլ միջոցների հաշվին մասնագիտական ուսուցման մասին:

Վիճակագրական կոմիտեի մշտադիտարկման արդյունքում խոշոր և միջին ընկերություններից և ձեռնարկություններից հավաքված վերոնշյալ հաշվետվությունների ամփոփագրի[60] մեջ ներառված է դիտարկվող ժամանակահատվածում մասնագիտական պատրաստում, վերապատրաստում անցած և որակավորումը բարձրացրած անձանց թվաքանակը: Համաձայն այս հրապարակման՝ 2014-2018 թվականներին Հայաստանում վերապատրաստում անցած աշխատողների թվաքանակը տատանվում է տարեկան 19.000-ից 22.000-ի միջակայքում: Օրինակ՝ 2014 թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 20.565, իսկ 2018 թ.-ին՝ 21.559:
Նշված 5 տարիներին (2014-2018 թթ.) վերապատրաստման դասընթացներ անցած աշխատողների թվաքանակը ՀՀ գրանցված աշխատողների ընդհանուր թվի՝ միջինում մոտ 5.6%-ն է կազմում: Այս ցուցանիշն ամեն տարվա համար տարբեր է, օրինակ՝ 6.5%՝ 2018 թ.-ի համար, 5.2%՝ 2017 թ. -ի համար:
2017 թ. -ին գործատուների կողմից աշխատողների վերապատրաստմանն ուղղված միջին ամսական ծախսը կազմել է 5.618 դրամ, իսկ 2018 թ. -ին ավելացել է՝ հասնելով 7.245 դրամի: Հատկանշական է, որ «պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» ոլորտներում միջին ամսական ծախսը վերոնշյալ միջին ցուցանիշներից բարձր է թե՛ 2017 թ. -ին, թե՛ 2018 թ. -ին:
Հասանելի է նաև 2015-2018 թթ. մասնագիտական վերապատրաստում անցած 81.750 անձի ուսուցման վայրի մասին վիճակագրությունը.

- 25.151-ը կամ մոտ 31%-ը՝ ուսումնական հաստատությունում,
- 53.074-ը կամ 65%-ը՝ անմիջապես կազմակերպությունում,
- 3.466-ը կամ 4%-ը՝ արտասահմանում:

Վերջապես, ՀՀ ՎԿ-ն «Աշխատուժի հետազոտության» շրջանակներում հրապարակում է նաև անվանազերծված միկրոտվյալների բազա՝ տնային տնտեսությունների հարցման հիման վրա: Հարցաթերթի հարցերից մեկն այն մասին է, թե արդյոք անձը մասնակցել է որևէ վերապատրաստման, պրակտիկայի, մասնավոր դասերի, մասնագիտական/վերապատրաստման դասընթացի՝ կանոնավոր կամ միանգամյա՝ թեկուզ մի քանի ժամ կամ օր տևողությամբ: Վերապատրաստման դասընթացների ձևերի և ոլորտների վերաբերյալ բազմակի ընտրությամբ հարցերն ամփոփված են ստորև.

[60] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2017, 2018, ՀՀ վիճակագրական կոմիտե:

- կանոնավոր մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ (օր. ՝ դպրոց, քոլեջ, ուսումնարան, բուհ, ասպիրանտուրա և այլն)	- կարճաժամկետ ուսուցում՝ առանց որակավորման (օր. ՝ մատնահարդարում կամ վարսահարդարում, ծաղկի դիզայն և այլն)
- աշխատանքային պրակտիկա որպես փորձնակ, աշակերտ	- օտար լեզվի դասընթաց
- ուսուցում SS ոլորտում (ծրագիր), համակարգչային ուսուցում	- դրամաշնորհային ստարտափ ծրագիր
- ներկա աշխատանքի հետ կապված ուսուցում/ուսուցում սկսնակ աշխատողների համար	- վարորդական դասընթաց
- սեմինար, համաժողով, դասախոսություն	- ուսուցում՝ կապված նախասիրությունների հետ (երգ, պար, սպորտ, շախմատ, կերպարվեստ և այլն)
- առցանց/հեռավար ուսուցում, վեբինար	- այլ (հստակեցնել), (օրինակ՝ ինքնուսուցում, ինքնակրթություն)

Բաժին 2. Հիմնական արդյունքների ամփոփում

1. Հայաստանում պետական ոլորտը հանդիսանում է ՄՈՒԿ ոլորտի 4 հիմնական դերակատարներից ամենաակտիվը (ֆինանսավորման և ծրագրային բազմազանության տեսանկյունից)։ Մյուս կարևոր դերակատարներն են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ), ԲՈՒՀ-երը և գործատուները, որոնք իրենց աշխատողներին վերապատրաստումների հնարավորություն են ընձեռում: Այնուամենայնիվ դեռ կան խնդիրներ կապված քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների բովանդակության և որակի, դրանց նպատակահարմարության, մասնագիտական հմտությունների զարգացման գործում դրանց դերի, կատարողականի գնահատման և այլնի հետ:

2. Հայաստանում գոյություն չունի բուհերի կողմից ԼԾԿ կամ ՄՈՒԿ կազմակերպման միասնական մոդել: Այդպիսի ծրագրերը ներառում են պետության կողմից պարտադրված մի շարք դասընթացներ քաղաքացիական ծառայողների համար, համալսարանի գիտական անձնակազմի վերաորակավորման հնարավորություններ երկրորդ գիտական աստիճանը ստանալու համար և ՀՈՒ՝ ավելի ստանդարտ մոտեցումներ:

3. Հասարակական կազմակերպությունները հանրությանը պարբերաբար առաջարկում են լրացուցիչ կրթության հնարավորություններ՝ հիմնականում մարդու իրավունքների, ժողովրդավարական և քաղաքացիական արժեքների վերաբերյալ: Այս ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից և թիրախավորում են քաղաքացիական, հանրային ակտիվության հատկանիշներ դրսևորող անհատներին/խմբերին:

4. Գործատուների և նրանց աշխատողների լրացուցիչ մասնագիտական ուսուցման համակարգը նույնպես ամբողջությամբ ձևավորված չէ: Խոշոր և միջին ընկերություններից շատերը կազմակերպում են աշխատանքի հավակնող (թեկնածու) անձանց ուսուցումը առանց աշխատանքային փորձառության պահանջի: Կա նաև թերահավատություն բարձրագույն կրթության որակի նկատմամբ (բուհերի որակավորումների անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին), ինչի պատճառով գործատուները սկսել են ավելի շատ ներդրումներ կատարել իրենց աշխատակազմի գիտելիքների և հմտությունների զարգացման գործում: Այնուամենայնիվ, Հայաստանում գործատուների մեծ մասն աշխատողների շարունակական կրթությունը դեռևս համարում է երկրորդային և որևէ հնարավորություն չի ստեղծում դրա համար:

5. Թեև Զբաղվածության պետական գործակալությունն իրականացնում է լրացուցիչ կրթության ծրագրեր, որոնք ուղղված են տնտեսապես ոչ ակտիվ բնակչության զբաղվածության ապահովման խնդրին, առաջարկի նկատմամբ

հետաքրքրությունը գործատուների և աշխատանք փնտրողների շրջանում այդքան էլ բարձր չէ: Այս դասընթացներին մասնակցությունը հանգեցնում է գործազրկության նպաստի կրճատման, ինչն էլ իր հերթին ազդում է աշխատանք փնտրողների՝ կարողությունների զարգացման համար առաջարկվող դասընթացներին մասնակցելու շահագրգռվածության վրա: Միևնույն ժամանակ Գործակալության կողմից իրականացվող պետական ուսումնական ծրագրերն ունեն դիմելու բարդ և բյուրոկրատական ընթացակարգեր, և դրանց վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը ցածր է:

6. Քանի որ չկա կրթության և վերապատրաստման ՈԱ կենտրոնացված և միասնական համակարգ, Հայաստանում ՄՈՒԿ ապահովողների հիմնական հատվածը հետևում է իր ներքին ՈԱ ընթացակարգերին և ՄԿ ծրագրերի չափանիշներին: Հայաստանում մեծահասակների կրթության վերաբերյալ թե՛ քանակական, թե՛ որակական ճշգրիտ վիճակագրական տվյալների հավաքման ինստիտուցիոնալ և արժանահավատ մեխանիզմները բացակայում են: Գործատուների կողմից Զբաղվածության պետական գործակալություն ներկայացվող «Աշխատողների մասնագիտական ուսուցման մասին» պարտադիր տարեկան հաշվետվությունը Հայաստանում մեծահասակների կրթության վերաբերյալ անբավարար և ոչ արժանահավատ պատկեր է արտացոլում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով նախորդ երկու բաժնում ամփոփված հիմնական արդյունքների վերլուծության վրա՝ առաջարկությունների ստորև ներկայացված ցանկը նպատակ ունի խորհրդատվական աջակցություն տրամադրելու բոլոր մակարդակներում որոշում կայացնողներին՝ ներառյալ քաղաքականություն մշակողներին, հանրային կառավարիչներին, ՄՈՒԿ տրամադրողներին և այլ կարևոր մարմիններին: Սույն բաժնում ներառված առաջարկները խմբավորված են՝ համաձայն Գործողությունների բելեմյան շրջանակի 5 հիմնական ոլորտների՝ քաղաքականություն, կառավարում, ֆինանսավորում, որակ, մասնակցություն:

Քաղաքականություն

1. Կրթությանն առնչվող ՀՀ հիմնական օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը մեծ մասամբ հակասական տերմինաբանություն են առաջարկում ՄՈՒԿ ոլորտի համար: Տարաբնույթ եզրույթների կիրառությունը հատկապես շփոթեցնող է, երբ միջազգային տերմինաբանության հետ համապատասխանեցնելու կարիք է առաջանում: Արդեն երկար ժամանակ է, ինչ կրթության ոլորտին առնչվող միջազգային փաստաթղթերի բառացանկերում ՄԿ եզրույթը փոխարինվել է ՄՈՒԿ-ով (այս փոփոխություններն ամրագրված են Գործողությունների բելեմյան շրջանակում, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ կարևոր փաստաթղթերում), և ՀՀ կառավարությունը (որպես ՄԱԿ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկիր) պետք է պահպանի իր ազգային փաստաթղթերի արդիականությունը՝ ընտրելով այնպիսի սահմանում, որը լավագույնս կներկայացնի Հայաստանում ՄՈՒԿ նպատակները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ՄՈՒԿ վերաբերյալ առաջարկությունները (RALE) ներառում են տերմինաբանության բավականին օգտակար բացատրական բառարան:
2. Օրենսդրական ակտեր և ոլորտին առնչվող այլ փաստաթղթեր մշակելիս անհրաժեշտ է խաչաձև հղումներ կատարել այն համընդհանուր (միջազգայնորեն) համաձայնեցված եզրույթներին և նրանց սահմանումներին, որոնք վերաբերում են ՄՈՒԿ ոլորտին, ինչպես նաև կիրառել հենց այդ եզրույթները (ԼԾԿ, ՄԿ և ՀՈՒ) ՄՈՒԿ բոլոր իրավական փաստաթղթերում, ներառյալ՝ կրթության ռազմավարություններում, միջնաժամկետ ծախսային ծրագրերում, ԿԳՄՍՆ տարեկան հաշվետվություններում և, ամենակարևորը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագծում:
3. ՄՈՒԿ քաղաքականության բարելավման և առհասարակ ոլորտի կանոնակարգման համար առաջարկվում է երկու քայլի իրականացում: Նախևառաջ՝ Նախարարության կողմից ներկայումս մշակվող «Կրթության ռազմավարության» մեջ ՄՈՒԿ ոլորտին վերաբերող հատվածում մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը անհրաժեշտ է ամրագրել որպես կրթական համակարգի ենթաճյուղ: Այնուհետև, այս ռազմավարության կիրարկումն ապահովելու համար գծել ՄՈՒԿ ճանապարհային քարտեզ: Նաև

կարևոր է, որ այս փաստաթղթերում ՄՈՒԿ-ը հանդես գա թե՛ որպես մասնագիտություն, թե՛ որպես գիտակարգ:

4. Ակտիվ քաղաքացիական հմտությունների ձևավորումը պետք է դառնա ռազմավարական առաջնահերթություն նախարարության համար, որը պետք է նաև կենտրոնանա մեծահասակների քաղաքացիական կրթության և վերապատրաստման վրա: Այս ոլորտը չպետք է կառավարվի միայն ՔՀԿ-ների, ՀԿ-ների և միջազգային դոնոր համայնքների դերակատարների կողմից, այլ պետք է ավելի շատ հիմնված լինի ինստիտուցիոնալ պրակտիկաների վրա: ՄՈՒԿ կենտրոնների և համայնքների, ՄՈՒԿ ծառայություններ տրամադրող ՀԿ-ների համար ծրագրահեն պետական ֆինանսավորման դիմելու հնարավորություններ պիտի ստեղծվեն: Բացի այդ՝ բոլոր ՄՈՒԿ տրամադրողները պետք է օգտվեն ներկայիս բարենպաստ պայմաններից՝ իրավական և գործնական հարթակներում քաղաքացիական կրթությունը խթանելու համար:
5. Անհրաժեշտ է ներդնել և կիրառել աշխատողների՝ շարունակական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը երաշխավորող գործիքներ, որոնք կսահմանափակեն գործատուների կողմից խոչընդոտների հարուցումը: Մյուս կողմից, պատժողական մեխանիզմներից զատ, անհրաժեշտ է ներդնել գործատուների խրախուսման մեխանիզմներ, որպեսզի վերջիններս մոտիվացված լինեն իրենց աշխատողների լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման հարցում: Այդպիսիք կարող են լինել, օրինակ, որոշակի հարկային արտոնությունների տրամադրումը, բարոյական խրախուսումը, ինչպես նաև հաջողված պրակտիկաների հանրայնացումը:

Կառավարում

1. Ջատագովությունն ու իրազեկումը պետք է դիտարկվեն որպես ՄՈՒԿ համակարգի սահուն կառավարման երաշխավորներ: Պետությունը պետք է հանրայնացնի ու խթանի ՄՈՒԿ-ը (և դրան վերաբերող տերմինաբանությունը) հանրային արշավների և ջատագովական այլ միջոցառումների միջոցով:
2. Կրթության ու գիտության ոլորտի կառուցվածքային փոփոխությունների (ԿԳՄՄՆ-ի ձևավորում) լույսի ներքո անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կարգավիճակը[61]: Խիստ ցանկալի է, որ նախարարությունն այն վերածի առանձին ՄՈՒԿ վարչության հետևալ ռազմավարական հմտություններով՝ կադրային ռեսուրսի համալրում ու կառավարման տիրույթում գործառույթների շարունակական ընդլայնում:

[61] Այս հետազոտությունն ամփոփման ժամանակահատվածում նախարարությունում որոշ քննարկումներ էին ընթանում ԼԾԿ կարգավիճակի վերաբերյալ: Ըստ www.escs.am կայքում հասանելի նախարարության կառուցվածքի՝ այն դարձել է Երիտասարդության հարցերով վարչության առանձին բաժին՝ «Երիտասարդության քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչություն» անվամբ:

3. Հարկավոր է ապահովել Ուսուցման ազգային հիմնադրամի (ՈՒԱՀ) պատշաճ ֆինանսավորումը, որպեսզի վերջինս լիարժեք իրականացնի 2015 թ. ընդունված «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման» կարգերով նախատեսված գործառույթները, ի թիվս որոնց՝ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման մշտադիտարկումը, արդյունքների ճանաչումը, վավերացումը, հավատարմագրումը, պետական ռեեստրի էլեկտրոնային բազայի վարումը: Հետևողական ջանքեր պետք է գործի դրվեն առաջնային և երկրորդական օրենսդրական ակտերի մշակման և ընդունման համար, որոնք կապահովեն ճանաչման ու վավերացման գործընթացների ամբողջական իրականացումը:
4. Վիճակագրական և որակական տվյալների հավաքագրման ինստիտուցիոնալ և վստահելի մեխանիզմներ է անհրաժեշտ մշակել ու ներդնել Հայաստանում: Պետք է զարգացնել տարբեր գերատեսչությունների կողմից տվյալների հավաքագրման և նրանց միջև փոխգործակցության մշակույթը, ինչպես նաև ստեղծել տվյալների միասնական բազա՝ պետության բոլոր շահագրգիռ կողմերի միջև վիճակագրական տվյալների փոխանակման համար (այն կարող է համակարգել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը) :
5. ՄՈՒԿ արդյունավետ կառավարումը պետք է հիմնված լինի համակարգման վստահելի մեխանիզմի վրա: Ինչպես ցույց է տալիս այս ուսումնասիրությունը՝ ՀՀ-ում բավականին թույլ է միջգերատեսչական փոխգործակցությունը: Միջազգային պրակտիկայում ՄՈՒԿ ազգային խորհուրդները կարևոր մասնակցային հարթակներ են, որոնք միավորում են պետական, հանրային, մասնավոր և քաղաքացիական ոլորտների շահառուներին: Համակարգման նման մեխանիզմը հեշտացնում է ազգային մակարդակում պլանավորման ու համակարգման համապարփակ գործընթացները: Այս մոդելը կարող է ծառայել որպես ուղեցույց նմանատիպ մեխանիզմի մշակման համար, որը կհամապատասխանեցվի ազգային ստանդարտներին և կարիքներին:

Ֆինանսավորում

1. Ինչպես պետական բյուջեի, այնպես էլ միջնաժամկետ ծախսային ծրագրերի շրջանակում ՄՈՒԿ ոլորտին ուղղված առանձին հատկացումներ է անհրաժեշտ նախատեսել: Ոլորտի զարգացումը որպես պետական առաջնահերթություն մատնանշելու տեսանկյունից կարևոր է ֆինանսական փաստաթղթերում ՄՈՒԿ եզրույթի կիրառումը:Կարևոր է նաև ավելացնել ոլորտի ֆինանսավորումը՝ համապատասխան թվաքանակով մեծահասակների օժանդակելու և նրանց թիվը շարունակաբար ավելացնելու նպատակով:
2. ԿՁՆ 4-ի իրականացման և ՄՈՒԿ ներառական համակարգի մշակման հարցում հաջողության հասնելու համար պետք է առաջնահերթությունը տալ ազգային տվյալների հավաքագրմանը: Պետական բյուջեն պետք է ուղղել ոչ միայն պետական ծառայողների և խոցելի խմբերի կարիքներին, այլև հասարակության

ավելի լայն շերտերի կարիքները հոգալուն: Այն կարող է մեծահասակների՝ ՄՈՒԿ կայուն մասնակցության խթան հանդիսանալ:

3. ՄՈՒԿ ճանաչման, վավերացման և հավատարմագրման համակարգի նախագծման, պետական ռեեստրի կանոնավոր վարման, գնահատման և ուղղորդման գործընթացում ներգրավված կառույցների հիմնական անձնակազմի կարողությունների զարգացումը պետք է ամրապնդվի պետական և մասնավոր ֆինանսավորմամբ:

Որակ

1. ՈԱ համակարգը բախվում է մարտահրավերների, քանի որ չկա բավարար իրազեկվածություն այն մասին, թե ինչպես կարելի է արդյունքի վրա հիմնված գնահատումը կիրառել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման և հաստատման գործում: ՈՒԱՀ-ը ոչ ֆորմալ և գիտական աստիճան չտրամադրող ծրագրերի գլխավոր ՈԱ մարմինն է, սակայն կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի ՈԱ ոլորտում նաև փորձված խորհրդատվական մարմիններ և այլ հիմնական շահագրգիռ կողմեր ներգրավելու ուղղությամբ:
2. Որակավորումների ազգային ոլորտային շրջանակը (այն դեռ փորձնական փուլում է Հայաստանում) կարող է կիրառվել գործատուների կողմից ուսումնառության արդյունքների ճանաչման համար, քանի որ այս շրջանակը խթանում է աշխատուժի շարժունակությունը և առկա հմտությունների հնարավոր գնահատումը՝ որպես դրա բաղկացուցիչ մաս: Այն կարող է կիրառվել նաև ՄՈՒԿ որևէ բնագավառում ծառայություններ տրամադրողներին կողմնորոշելու հարցում, ինչպես նաև ելակետ հանդիսանալ՝ զբաղվածության քաղաքականության համար: ՈԱԱԿ-ի՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված մեթոդաբանությունը և Կառավարությունից ֆինանսական անկախությունը թույլ են տալիս ընդլայնել ազգային ՈԱ համակարգը՝ նրանում ընդգրկելով նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ՄՈՒԿ արդյունքները: ՈԱԾ նոր մոտեցումների քարտեզագրումից հետո քաղաքականություն մշակողները պետք է վերանայեն իրավական խոչընդոտները (օր.՝ ԼԾԿ ծրագրերի առավելագույն տևողություն) ՝ 5-րդ մակարդակ ունեցող որակավորումներ ներկայացնելու համար, քանի որ վերջիններս ամենաշատն են համապատասխանում ավելի կարճաժամկետ ՄՈՒԿ ծրագրերի որակի ապահովմանը:
3. Պետությունը պետք է ներդնի աշխատողների մասնագիտական կարիքների գնահատման ինստիտուցիոնալ համակարգեր: Պետական գործակալությունների կողմից տրամադրվող վերապատրաստման պատվերները պետք է ձևակերպվեն կարիքների գնահատման այնպիսի համակարգի հիման վրա, որի արդյունքում կամրագրվեն վերապատրաստումներից ակնկալվող հստակ և չափելի կրթական վերջնարդյունքներ:

4. Նորարարական և պարբերաբար թարմացվող բարձրորակ բովանդակության մշակումը կօգնի ՄՈՒԿ դասընթացներ իրականացնողներին թարմացնել պետական աշխատողների վերապատրաստման համար նախատեսված հնացած ուսումնական և կրթական ծրագրերը և ապահովել այնպիսի ուսումնառություն, որը կնպաստի նրանց աշխատանքային հմտությունների ու կարողությունների հետագա զարգացմանը:
5. 2006 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում» ընդգրկված «անդրագոգիկա» մասնագիտությունը ՄՈՒԿ գիտակարգի շրջանակներում ավելի լայն մասնագիտացման նշանակալի հնարավորություններ չի տրամադրում: Մասնագիտական որակավորում ունեցող մեծահասակների կրթություն իրականացնողների՝ ուսուցիչների, վերապատրաստողների, դասավանդողների պակասը տեսանելի է հատկապես համայնքային մակարդակում: «Անդրագոգիկան»՝ որպես մասնագիտացում, անհրաժեշտ է հասանելի դարձնել կրթական համակարգի այլ մակարդակներում ևս (ՈԱԾ):

Մասնակցություն, ներառում և արդարություն

1. Որպես անկախ ոլորտ՝ ՄՈՒԿ թերարժևորումն ու անհարկի թղթաբանությունը լրջորեն խոչընդոտում են պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերին մեծահասակների մասնակցությանը: Դիմումների ներկայացման բարդ գործընթացները պետք է պարզեցվեն, իսկ հերթագրումների ցանկերը՝ վերացվեն: Թվային գործիքները, ինչպիսիք են կառավարման տեղեկատվական համակարգերը, կարող են մեծապես նպաստել այս գործընթացին:
2. Պետական աշխատողների համար նախատեսված ՄՈՒԿ ծրագրերը պետք է եզրափակվեն այնպիսի գնահատմամբ, որի արդյունքում թե՛ գործատուները, և թե՛ աշխատողները հստակ պատկերացում ունենան, թե ինչ բնույթի ու որակի կոմպետենցիաներ ունեն: Պետական աշխատողների լրացուցիչ կրթության արդյունքները պետք է նպաստեն վերջիններիս մասնագիտական ու պաշտոնական առաջխաղացմանը՝ որպես նմանատիպ ուսումնական ծրագրերին մասնակցելու մոտիվացիա: Աշխատանքային անձնագրերի մշակումն ու ընդլայնումը կօգնի լուծել խնդիրը:
3. ՀԿ-ների կողմից առաջարկվող ՄՈՒԿ ծրագրերը ֆինանսավորող միջազգային կազմակերպությունները պետք է ավելի սերտ երկխոսություն վարեն թե՛ պետության, թե՛ մասնավոր հատվածի, և թե՛ հասարակության ավելի լայն շրջանակների հետ՝ նրանց կրթական կարիքները առավելագույնս պատկերացնելու համար: Առաջարկվող ձևաչափերից մեկը դոնորների պարբերական հանդիպումների կազմակերպումն է:
4. Անհրաժեշտ է ներդնել և կիրառել աշխատողների՝ շարունակական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը երաշխավորող իրավական գործիքներ, որոնք կսահմանափակեն գործատուների կողմից խոչընդոտների հարուցումը:

5. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն իրենց կրթական միջոցառումների ներառականությանը՝ մասնակիցների շրջանակը չսահմանափակելով միայն երիտասարդներով, հանրային ակտիվություն դրսևորող և/կամ քաղաքացիական հմտություններ ունեցող անհատներով ու խմբերով:
6. Անհրաժեշտ է հնարավորինս դյուրին և ճկուն դարձնել 2015 թ. ընդունված «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման» կարգով սահմանված՝ սովորողների ուսումնառության արդյունքների ճանաչման ընթացակարգը: Միևնույն ժամանակ գնահատման և ճանաչման մեխանիզմները պետք է հնարավորինս ներառական ու գրավիչ լինեն հանրության լայն շերտերի համար:
7. Պետք է ուսումնասիրվեն ՄՈՒԿ լավագույն պրակտիկաները և հնարավորության դեպքում կրկնօրինակվեն՝ ՄՈՒԿ համապատասխան ծառայությունները մեծահասակների տարբեր խմբերին (ներառյալ խոցելի խմբեր) հասանելի դարձնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հավելյալ տեղեկություն 2015 թ. ընդունված քաղաքականության առնչվող երկու փաստաթղթերի վերաբերյալ

«Լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման և իրականացման կարգը», «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման ու ճանաչման համակարգերի կարգը» (ՀՀ-ում)

Վերոնշյալ ընթացակարգի համաձայն՝ ուսումնառությունը կարող է տրամադրվել Ուսուցման ազգային ռեեստրում նախապես գրանցված կազմակերպությունների կամ անհատների կողմից: Որոշակի մասնագիտության շրջանակում հավատարմագրված մասնագիտական ուսումնական հաստատությունները կարող են ներառվել ռեեստրում առանց նախապայմանների: Լրացուցիչ կրթություն տրամադրող անհատներն ու կազմակերպությունները պետք է ՈՒԱՀ-ին ներկայացնեն ուսուցման մոդուլային ծրագիր, որը կվերանայվի հիմնադրամի մասնագիտական կոմիտեի կողմից: Այնուհետև, հիմք ընդունելով հիմնադրամի կողմից տրամադրվող մասնագիտական եզրակացությունը, ծրագիրը կարող է երաշխավորվել պետական կառույցի լիազոր մարմնի կողմից (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն), որը պատասխանատու է կրթական համակարգի կառավարման համար:
Դասընթացի ավարտին մասնակցին շնորհվում է համապատասխան վկայական և ներդիրը, որտեղ պարտադիր նշվում են սովորողի ուսման վերջարդյունքները:
Վկայականի և դրա ներդիրի նմուշը գրանցվում են Ուսուցման ազգային ռեեստրում:
Բացի այդ՝ ուսումնառություն տրամադրող ցանկացած մարմին հիմնադրամին տալիս է իր դասընթացի մասնակիցների մասին տեղեկություններ.

- անուն, ազգանուն, հայրանունը
- անհատական ծածկագիրը
- ծննդյան ամսաթիվը
- սեռը
- քաղաքացիությունը
- դասընթացի անվանումն ու տևողությունը
- դասընթացի մասնակցության վերջնաժամկետը
- ուսուցման արդյունքները
- տրված վկայականի (կամ վկայականների) համարը

Հավելված 2. ՄԿ հիմնական տրամադրողների ցանկ՝ ըստ ոլորտների [62]

1.Պետական կառավարման մարմիններ	➢ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ[63] ➢ ՀՀ արդարադատության նախարարության արդարադատության ակադեմիա[64] ➢ ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց[65] ➢ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոն[66] ➢ Առողջապահության ազգային ինստիտուտ[67] ➢ Կրթության ազգային ինստիտուտ (լուծարված) ➢ ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ)[68] ➢ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո) ➢ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն[69]
2.Լրացուցիչ կրթական ծրագրեր տրամադրող համալսարաններ	➢ Երևանի պետական համալսարան[70], հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն ➢ Բրյուսովի պետական համալսարան[71], «SMART Caffe» ձեռներեցության կենտրոն ➢ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան[72], հետազոտական կենտրոններ ➢ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան[73], Change Lab («Փոփոխությունների կառավարում» լաբորատորիա)

[62] Ավելին՝ հայերենով:
[63] http://www.mlsa.am/?page_id=4372
[64] http://www.justiceacademy.am/#8
[65] http://www.diplomaticacademy.am/hy/
[66] http://www.mftc.am/en
[67] https://nih.am/am
[68] http://www.mkuzak.am/
[69] https://ktak.am/index.php/am
[70] http://www.ysu.am/main/hy
[71] https://brusov.am/hy/page_list/smart_dzernarkatirakan_kentron/#sthash.S60FLAc0.dpbs
[72] https://aspu.am/hy/page/hpmh_masin/
[73] https://asue.am/am/asue/about

3. ՔՀԿ-ներ և/կամ հիմնադրամներ	➢ Եվրասիա համագործակցության հիմնադրամ[74] (ստեղծագործական խաղեր, Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոց, Քննադատական մտածողության դպրոց, ՔՀԿ կառավարման դպրոց) ➢ Հայաստանի մանուկների հիմնադրամ (ՔՈԱՖ)[75] (անգլերեն, ուսուցիչների և կառավարիչների վերապատրաստում, հետդպրոցական և ամառային ծրագրեր, դպրոցներում՝ ժողովրդավարություն և քաղաքացիական ակտիվություն, երիտասարդության համար մասնագիտական կողմնորոշում և պրակտիկայի հնարավորություններ) ➢ Մեդիա նախաձեռնությունների կենտրոն[76] (մեդիագրագիտության դասընթաց) ➢ Հանրային քաղաքականության ինստիտուտ[77] (ամառային դպրոց, մարդու իրավունքների մոնիթորինգի և քարոզչության մասին դասընթաց, դասախոսական անձնակազմի վերապատրաստում) ➢ Հայկական ՍԻՎԻՏԱՍ[78] (քաղաքացիական կրթություն) ➢ ՀԲԸՄ հայկական վիրտուալ քոլեջ[79]

[74] https://epfarmenia.am/hy
[75] https://www.coaf.org/hy/
[76] https://mediainitiatives.am/
[77] http://ipp.am/hy/3037-2/
[78] https://civitasarmenia.am/
[79] https://www.agbu.am/am/project-programs-2/educational-arm/2013-07-25-07-51-51/160-archive-2008-1/news1/216-agbu-hay-virtual-colledge

Հավելված 3.Տեղեկատվություն տրամադրած անձանց ցանկ

Տեղեկատվություն տրամադրած անձ	Կազմակերպություն
Արամ Ավագյան	«Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ
Արևիկ Սարգսյան	«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ասոցացիա» ՀԿ
Գայանե Հովակիմյան	«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ արդարադատության նախարարություն
Հայկ Դավեյան	Beyond Learning Hub
Հովհաննես Հովհաննիսյան	ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով
Քրիստինա Ծատուրյան	Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
Լիլիթ Բեգլարյան	«Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ
Լուսինե Քալանթարյան	Հայաստանի վիճակագրական կոմիտե
Լուսինե Խառատյան	Կրթական քաղաքացիական նախաձեռնություն
Մարինա Գալստյան	«Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն» ՀԿ
Մարինե Հակոբյան	Ուսուցման ազգային հիմնադրամ/ՀՀ ազգային ժողով
Սամվել Պիպոյան	Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
Շահանե Բեգլարյան	Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
Յուլիա Ստակյան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ, GIZ)

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Academic Information Centre – Latvian ENIC/NARIC, Erasmus+ NARIC project No 595635-EPP-1-2018-1- LV-EPPKA3-NARIC "Comparing qualifications for reliable recognition (QUATREC)" (2018-2020) http://www.aic.lv/portal/content/files/QUATREC_report.pdf
2. Adult Professional Orientation և Career Guidance (2016), Methodological Handbook Methodological Centre for Professional Orientation
3. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք (2001), http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1741&lang=arm
4. Ալավերդյան Լ., Կարապետյան Հ., Գալստյան Մ., Մարգարյան Տ., ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 մոնիթորինգի և գնահատման հաշվետվություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2016
5. Aniskina, N., Quality Assurance in Continuing Adult Education: From the European To the National Level" International Journal for Quality Research 9(3) pp. 373–390
6. «Աշխատողների մասնագիտական ուսուցման մասին» (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=22560
7. Առաջարկություններ մեծահասակների ուսումնառության և կրթության վերաբերյալ (2015) https://uil.unesco.org/adult-education/unesco-recommendation/unesco-recommendation-adult-learning-and-education-2015
8. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծեր (2019), https://www.e-draft.am/projects/2164
9. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2004), https://www.arlis.am/documentview.aspx?docid=103999
10. Belém Framework for Action, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000187789_mul
11. Beyond Learning Hub, Methodology "Designing Measurable Learning Experiences"
12. ԳՄՀԸ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագիր, http://escs.am/en/static/dual?s=edu
13. Gidicsin C.M., Maye J.M, Locascio J.J et al. (2015), "Cognitive activity relates to cognitive performance but not to Alzheimer disease biomarkers", Neurology 85 (1) pp. 48-55
14. Corley, F., (1996), "The Armenian Church Under the Soviet Regime, Part 1: "The Leadership of Kevork", Religion, State & Society, Vol. 24, No. 1, pp. 9-47
15. Díaz-López, M.P., López-Liria, R., Aguilar-Parra, J.M. et al. (2016) "Keys to active ageing: new communication technologies and lifelong learning", SpringerPlus 5, 768
16. Edu2Work to bridge the gap between labor market and education https://www.sdglab.am/en/news/news/edu2work-to-bridge-the-gap-between-labor-market-and-education

17. Escuder-Mollon, P., Esteller-Curto R., Ochoa L., Bardus M., (2014), “Impact on Senior Learners’ Quality of Life through Lifelong Learning”, Procedia - Social and Behavioral Sciences 131, Elsevier LTD, pp. 510 – 516
18. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք (2013), https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87734
19. Ինտերակտիվ բյուջե 2020, https://www.e-gov.am/interactive-budget/
20. List of OECD Member countries - Ratification of the Convention on the OECD, https://www.oecd.org/about/document/list-oecd-member-countries.htm
21. «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը», ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=82058
22. Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարություն, 2013-2017 (2013)
23. «Կրթության մասին» ՀՀ օրենք (1999), https://www.irtek.am/views/act.aspx?aid=150066
24. Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացման հայեցակարգ և 2019-2025թթ. գործողությունների ցանկ http://escs.am/files/files/2019-12-01/901c360398db65cd035997d9e41ae789.pdf
25. Հայաստանի Հանրապետության աշխատաշուկա, 2017-2018, Հայաստանի վիճակագրական կոմիտե
26. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր (2019), https://www.gov.am/files/docs/3347.pdf
27. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը (2011), http://www.irtek.am/views/act.aspx?aid=150178
28. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը, https://www.irtek.am/views/error.aspx?aspxerrorpath=/%20views/act.aspx
29. Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարություն (2019), http://www.mlsa.am/?p=24273
30. Հայաստանի տվյալները Կայուն Զարգացման Նպատակների ցուցանիշների համար, https://armstat.github.io/sdg-site-armenia/?fbclid=IwAR3Gf-VUyPi-wz0U8qAnaqapGPuSeCAB0aMh1ZQHWpvK_GoBnWRwE-naoGQ
31. ՀՀ ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց կրթության առկա իրավիճակը» (2020), Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ, http://www.dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Resources/DVV-PEN-Research_for_prison_education_2019.pdf
32. ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1550-Ն որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=62533
33. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թ. մայիսի 17-ի N 486-Ն հրաման, http://www.irtek.am/views/act.aspx?aid=85666

34. ՀՀ մշտական բնակչության կրթական մակարդակը (2011), https://armstat.am/file/article/3._bajin_3_329-364.pdf
35. ՀՀ որակավորումների ազգային շրջանակ (2011)
36. ՀՀ-ում ցկյանս ուսումնառության հայեցակարգ (2009), https://www.gov.am/files/meetings/2009/3912.pdf
37. Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը (2005), https://www.irtek.am/views/act.aspx?aid=34606
38. McBride, V., 2020 "Policies for Human Capital Development Armenia", Torino Process Assessment, ETF
39. Monitoring survey results for Armenia, 3rd global report on adult learning and education, https://uil.unesco.org/i/doc/adult-education/grale-3/national-reports/armenia.pdf
40. National progress report submitted by the Government of The Republic of Armenia, Follow-up of CONFINTEA VI, https://uil.unesco.org/fileadmin/download/en/national-reports/europe-and-north-america/Armenia.pdf
41. ՈԱԱԿ կանոնադրություն, http://www.anqa.am/en/about-us/mission/anqa-charter/
42. Որակավորումների ոլորտային շրջանակի կիրառման ձեռնարկ, TEMPUS-ի «Համալսարան - Գործատու Հայկական համակարգող գործակալություն» ծրագիր, ARARAT ծրագրի հրատարակում
43. Proposal for a COUNCIL RECOMMENDATION on the validation of non-formal and informal learning /* COM/2012/0485 final - 2012/0234 (NLE) */, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A52012PC0485
44. TEMPUS ARMENQA project publications: National Qualifications Framework for Higher Education of Armenia (NQFA), Self-Certification Report of NQFA, Sectorial Qualifications Framework for Higher Education of Armenia (SQFs) http://armenqa.am/qualification-frameworks/documents-publications/
45. The development and state of the art of adult learning and education (ALE), National Report of the Republic of Armenia (2008), https://uil.unesco.org/fileadmin/multimedia/uil/confintea/pdf/National_Reports/Europe%20-%20North%20America/Armenia.pdf
46. Toffler, A. (1970), "Future shock" New York: Random House
47. UNESCO (2015): Education 2030. Incheon Declaration and Framework for Action for the Implementation of Sustainable Development Goal 4. Ensure inclusive and equitable quality education and promote lifelong learning opportunities for all. Paris: UNESCO.
48. UNESCO, Global Inventory of Regional and National Qualifications Frameworks, Volume II: National and Regional Cases, https://uil.unesco.org/fileadmin/keydocuments/LifelongLearning/en/Global%20Inventory%20of%20Regional%20and%20National%20Qualifications_v2.pdf
49. UNESCO Institute for Lifelong Learning (2010): CONFINTEA VI. Belém Framework for Action. Harnessing the power and potential of adult learning and education for a viable future. Hamburg: UIL.
50. UNESCO Institute for Lifelong Learning (2012): UNESCO Guidelines for the Recognition, Validation and Accreditation of the Outcomes of Non-formal and Informal Learning. Hamburg, UIL.
51. UNESCO (2015): Recommendation on Adult Learning and Education. Paris: UNESCO.

52. Vemuri P, Lesnick TG et all (2014) “Association of lifetime intellectual enrichment with cognitive decline in the older population”, JAMA Neurol.
53. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (2018), https://www.arlis.am/documentview.aspx?docid=138910